# Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻԹԻ 38 (1638) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, 2013
VOLUME 33, NO. 38 (1638) SATURDAY, OCTOBER 19, 2013

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Զորի Բալաեան չընդունիր իր դէմ եղած քննադատութիւնները



Գրող Զորի Բալաեան

Ղարաբաղեան շարժումի տարիներուն մեծ աղմուկ հանած հրապարակագիր, հետագային «Կիլիկիա» նաւով աշխարհը շրջող խումբի ղեկավար եւ Հայաստանի իշխանութիւններուն մօտիկ նկատուող անձ Զորի Բալաեանի բաց նամակը՝ ուղղուած Ռուսաստանի Նախագահ Վլատիմիր Փութինին, մեծ աղմուկ յառաջացուց Հայաստանէն ներս: Նամակին մէջ Բալաեան կը գրէ, որ Ղարաբաղը կը պատկանի Ռուսաստանին՝ 1813 Թուականին Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ Գիւլիստանի մէջ ստորագրուած խաղաղութեան պայմանագիրով: Զորի Բալաեան Փութինին կոչ կ՛ընէ այցելել Ղարաբաղ եւ վերջապէս գայն ճանչնալ որպէս Ռուսաստանի մաս: «Բոլորս պէտք է վերադառնանք այն միակ ճանապարհին, որն իր սկիզբն էր առել Ղարաբաղեան Գիւլիստանից: Պայմանագիրը, կրկնում եմ, ստորագրուել է յաւերժական ժամանակների համար»,- ըսուած է Ռուսաստանի Նախագահին ուղղուած բացն նամակին մէջ:

Զորի Բալաեան մերժելով մեկնաբանել իր նամակի արձագանքները, NEWS.am-ի Թղթակցի հետ գրոյցի ընթացքին ըսած է որ ինք անպայման հետագային ելոյթ կունենայ այս հարցի շուրջ, սակայն առայժմ ոչ մէկ հարցի չուզեր պատասխանել»:

Հարցին, թէ Բալաեան այդ նամակով կը ոտնահարէ ՀՀ Սահմանադրութեան յօդուածը ինքնիշխան երկրի մասին եւ կ՛արհամարհէ Արցախի համար կռուած մարտիկները, Բալաեան ըսած է,- «Դուք չէք կարդացել, դրա համար այդպէս էք ասում: Եթէ կարդացած լինէիք, կ՛իմանայիք այդպիսի բաներ չկան այնտեղ: Կարդացէք յօդուածը եւ տեսէք այդ բաները կայ, թէ ոչ, նամակի մէջ ամէն ինչ կայ, դուք պէտք է պատասխանէք քննադատողներին, որ յօդուածում այդպիսի բան չկայ: Ես չեմ ուզում նրանց լսել, որովհետեւ նրանք էլ չեն կարդացել: Իմ յօդուածի մէջ այդպիսի բան չկայ: Եթէ դուք կարդաք այնտեղ այդպիսի բան, որ այնտեղ գրուած է Ղարաբաղը Ռուսաստանի կազմում լինի, չգի-

Շար.ը էջ 4

## Զարուհի Փոստանջեան ոստիկաններու հսկողութեան տակ

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութիւնը յայտարարութեամբ մը եկաւ պահանջելու Հայաստանի իշխանութիւններէն, դադարեցնելու պատգամաւոր Զարուհի Փոստանջեանի դէմ ուղղուած քաղաքական հետապնդումները եւ վիրաւորանքներու եւ լուտանքներու արշաւը եւ ընդհանրապէս յարգել, ՀՀ իւրաքանչիւր քաղաքացիի ազատ արտայայտութեան իրաւունքը: «Իսկ նրանք, այդ Թւում՝ բարձրաստիճան պաշտօնեաները, ովքեր նրա հասցէին ֆիզիկական հաշուեյարդարի սպառնալիքներ են հնչեցնում, պէտք է պատասխանատուութեան ենթարկուեն օրէնքի ողջ խստութեամբ:»,- ըսուած է Ռաֆի Յովհաննիսեանի գլխաւորած կուսակցութեան յայտարարութեան մէջ:

Ինչպէս ծանօթ է, ԵԽԽՎ-ի վերջին նիստին Հայաստանի պատուիրակութեան անդամ Զարուհի Փոստանջեան հարց ուղղած էր Սերժ Սարգսեանին, վերջերս Եւրոպայի քազինոներէն մէկուն մէջ, 70 միլիոն եւրօ կորսնցուցած ըլլալու մասին:

Այս ելոյթէն ետք Փոստանջեան հասցէին սկսան հնչել սպառնալիքներ: Սպորտի եւ երիտասարդութեան փոխնախարար, հանրապետական Խաչիկ Ասրեան յայտարարեց, թէ Ստրասբուրգի մէջ Նախագահին նման հարց տալուն համար Փոստանջեանին պէտք է այրել խարոյկի վրայ:

Մտավախութիւն ունենալով, որ պաշտօնեայի այս յայտարարութենէն յետոյ ոմանք կրնան իր դէմ տարբեր ոտնձգութիւններ կատարել, Փոստանջեան դիմեց ոստիկանապետին՝ խնդրելով ապահովել իր անվտանգութիւնը: Այժմ ոստիկաններն ամենուր կը հետեւին իրեն:

«Ոստիկանների ներկայութիւնը պէտք է սթափեցնի բոլոր այն անձանց, ովքեր կը ցանկանան ոտնձգութիւն կատարել իմ նկատմամբ»,- ըսաւ Փոստանջեան, աւելցնելով որ ինքը մարտարուեստի կը տիրապետէ եւ հետեւաբար կրնայ ինքն իրեն պաշտպանել:

Ընդդիմադիր պատգամաւորը համոզուած է,որ քանի դեռ սպորտի եւ երիտասարդութեան փոխնախարարը մեկուսացուած չէ հասարակութենէն, սպառնալիքը կը շարունակուի մնալ: Հետեւաբար, Փոստանջեան կը պահանջէ քրէական գործ յարուցել «Հայոց Արծիւներ» կազմակերպութեան ղեկավար Ասրեանի դէմ եւ կալանաւորել զինք:

Հակառակ Պուլկարիոյ եւ Իտալիոյ դէմ արձանագրած յաջողութիւններուն

## Հայաստան դուրս մնաց Ֆութպոլի Աշխարհի Բաժակէն



Հայաստանի հաւաքականի աստղ՝ Հենրիկ Մխիթարեան (սպիտակ շապիկ) կը պայքարի գնդակի համար

Ֆութպոլի Աշխարհի Բաժակի զտումներուն, Եւրոպայի Բ. խմբակէն ներս հանդէս եկող Հայաստանի ազգային խումբը դուրս մնաց հետագայ պայքարէն, հակառակ չորս օրուայ ընթացքին արձանագրած երկու մեծ արդիւնքներուն:

Արդարեւ, Հոկտեմբեր 15-ին Նաբոլիի մէջ Հայաստան 2-2 հաւասար դուրս եկաւ աշխարհի ֆութպոլի հսկաներէն՝ Իտալիոյ հաւաքականին հետ խաղի ընթացքին : Այս մրցումէն չորս օր առաջ՝ Հոկտեմբեր 11-ին, Երեւանի մէջ հիւրընկալելով Պուլկարիոյ

Շար.ը էջ 4

## Հայաստան Հիմնադրամի Թելեթոնի Նոր Ծրագիրը Վարդենիս-Մարտակերտ Մայրուղի




Հայաստան Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի Հոգաբարձուներու Խորհուրդը իր անցեալ շաբթուան նիստին որոշեց զարկ տալ Վարդենիս-Մարտակերտ մայրուղիի շինութեան ծրագրին: Արդարեւ, 116 քիլոմեթր երկարութիւն ունեցող այս նոր ճանապարհի կառուցումն ու բարեկարգումը՝ մեծապէս պիտի նպաստէ երկու հանրապետութեանց միջեւ ընկերային եւ տնտեսական կապերու առաւել զարգացումին: Նշենք նաեւ որ նախապէս հիմնադրամը յաջողութեամբ աւարտած էր «Գորիս-Ստեփանակերտ» եւ «Հիւսիս-Հարաւ» մայրուղիներու շինութիւնը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՕՍՔԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԵՐԸ

*ԼՈՒՍԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ*

2013 թ. Սեպտեմբերի 3-ից մէկ ամիս անց թւում է, թէ Հայաստանը Մաքսային միութեան մասին խօսում է, ԵՄ-ին ինտեգրուելու ուղղութեամբ գործում: Մոսկուայում Սերժ Սարգսեանի ստորագրած յայտարարութիւնը Մաքսային միութեանը միանալու ցանկութեան մասին Հայաստանում ունեցաւ այն շարունակութիւնը, որ ՀՀ կառավարութիւնը Սեպտեմբերի 19-ին հաւանութիւն տուեց Մաքսային միութեան անդամակցութեան վերաբերեալ բանակցութիւններ եւ փաստաթղթեր նախապատրաստելու նպատակով աշխատանքներ ծաւալելու մի որոշման: Համաձայն այդ փաստաթղթի՝ եօթ-ութ յանձնախումբ էր ստեղծուելու, վարչապետ Տիգրան Սարգսեանի խմբավարութեան ներքոյ, որոնք պէտք է ուսումնասիրէին Մաքսային միութեան ընթացակարգերն ու կառոյցները (մի՞թէ դրանք փաստացի գոյութիւն ունեն) եւ դրանց հետ Հայաստանի գործունէութիւնը համապատասխանեցնելու հնարաւորութիւնը:

Սա այն դէպքում, երբ ՀՀ իշխանութիւնների որոշ յայտարարութիւնների համաձայն, նախընթաց ժամանակաշրջանում, ինչ-որ ամիսների հայաստանեան յանձնախմբեր ինչ-ինչ փաստաթղթի եւ լիազօրութիւնների շրջանակում արդէն մասնագիտօրէն աշխատել էին, այն էլ այնքան, որ յանգել էին եզրակացութեան, թէ արժէ Մաքսային միութեանն անդամակցել: Եթէ ասուածն աղերս ունի իրականութեան հետ, ապա ո՞ւր են նախորդ յանձնախմբերի կատարած աշխատանքի արդիւնքները, որ նոր յանձնախմբեր են ստեղծւում:

Պարզ է, որ իրականում ոչ մի տնտեսական-իրաւական աշխատանք էլ չի ծաւալուել Մաքսային միութեանը ՀՀ անդամակցութեան ուղղութեամբ, ոչ էլ դա արուելու է ապագայում: Քչերը կարող են չգիտակցել, որ Վլ. Փութինի տեսիլքը Մաքսային միութեան մասին քարոզչական հնարք է՝ Ռուսաստանի վերջնական արտամղումը Եւրոպայից քօղարկելու համար: Ինչպէս աջուձախ գայրանալով ու սպառնալով Ռուսաստանը մէկ տասնամեակ առաջ հեռացաւ Արեւելեան Եւրոպայից, այնպէս էլ այժմ դուրս է մղւում Արեւելեան գործընկերութեան տարածքից: Եւ սպառնալիքներով ու սաբոտաժներով նահանջի, թէ կառուցողական երկխօսութիւն վարելով՝ լոկ ձեւին է վերաբերւում, ինչին Եւրոպայում առանձնապէս ուշադրութիւն չէին դարձնում:

Միայն Հայաստանի վրայ գործադրուած ճնշումը, որ ՀՀ իշխանութիւններին ստիպեց Մաքսային միութեանը միանալու ցանկութիւն յայտնել, Եւրոպային հարկադրեց անդրադառնալ Փութինի միութիւններին եւ Սեպտեմբերի 12-ին Եւրոպայի խորհրդարանում ընդունել «Ռուսաստանի կողմից Արեւելեան գործընկերութեան երկրների հանդէպ գործադրուող ճնշումների մասին» բանաձեւը, որը խօսում էր Ռուսաստանին հասկանալի՝ սպառնալիքների լեզուով: Ինչ-որ սպառնալիքներ անգամ բարձրաձայնուեցին՝ Լիտուայի կողմից Կալինինգրադի մարզը մաքսային շրջափակման ենթարկելը կամ Բելառուսի անսպասելի յայտարարութիւնը, թէ Մաքսային միութիւնը ոչ վերպետական կազմաւորում է, ոչ էլ միասնական արժոյթ է ունենալու: Թէեւ կասկածից վեր է, որ որոշիչ սպառնալիքները հանրութեանը յայտնի չեն դառնում: Այլ հարց, որ ինչ-որ պահի տեսանելի են դառնում տեղաշարժեր:

Այս առումով Հոկտեմբերի 9-ին ՌԴ վարչապետի գրասենեակից տարածուած մամուլի հաղորդագրութիւնը ՀՀ վարչապետի հետ հեռախօսազրոյցի մասին ուշագրաւ էր՝ շրջադարձի նմանուելու չափ: Տեքստը հետեւեալն էր.

Դմիտրի Մեդվեդեւը եւ Տիգրան Սարգսեանը քննարկել են Մաքսային միութեան հետ Հայաստանի համագործակցութեան ընդլայնման հնարաւորութիւնները:

Կայացել է ՌԴ կառավարութեան նախագահ Դ. Ա. Մեդվեդեւի հեռախօսազրոյցը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ:

Քննարկուել են Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի Մաքսային միութեան հետ Հայաստանի համագործակցութեան հետագայ ընդլայնմանն առնչուող հարցեր, ինչպես նաեւ երկկողմ փոխգործակցութիւնն առեւտրատնտեսական եւ վառելիքաէներգետիկ ոլորտներում:

Անհնար է չնկատել՝ ոչ թէ անդամակցութեան նախապատրաստութիւն են քննարկում, այլ համագործակցութեան ընդլայնման հարցեր: Այդ մասին յայտնում է ոչ թէ Երեւանը, այլ Մոսկուան: Բառապաշարի փոփոխութիւնը փաստ է, իսկ շրջադարձ է, թէ ոչ, ցոյց կը տայ ժամանակը:

Նոյն մէկ ամսուայ ընթացքում առաւել ուշագրաւ զարգացումներ եղան Հայաստանի եւրոպական ինտեգրման ուղղութեամբ: Հոկտեմբերի 1-ին Էլիսեան պալատում կայացաւ Հայաստանի եւ Ֆրանսայի նախագահների հանդիպումը: Ընթացած բանակցութիւնների, համաձայնութիւնների վերաբերեալ Փարիզից եւ Երեւանից տարածուեցին համառօտ հաղորդագրութիւններ, ըստ ՀՀ Նախագահականի՝ Ֆրանսիան խոստացել էր «Շարունակել այսուհետ եւս աջակել Հայաստանի եւրոպական օրակարգի առաջմղմանը»:

Ֆրանսիայի աջակցութեան մասին աշխարհին յայտարարելուց յետոյ բնական էր եւ սպասելի, որ յաջորդ օրը Ստրասբուրգում նախագահ Սարգսեանի յայտարարութիւնները հնչէին Օլանդի հետ հանդիպման ուղեծրում: ԵԽԽՎ նիստում Սարգսեանին տրուած հարցերից առնուազն հինգ-վեցը վերաբերում էին Հայաստանի եւրոպական ինտեգրմանը կամ Մաքսային միութեանը: Հնչած պատասխաններից երկու հատուած, որոնք թոյլ են տալիս ապագայի առնչութեամբ դատողութիւններ անել, մէջբերում ենք ստորեւ: «Ինչպէս արդէն հնարաւորութիւն ունեցայ ասելու, մենք շարունակելու ենք մեր յարաբերութիւնները ԵՄ-ի հետ զարգացնել, մենք լինելու ենք Վիլնիւսում եւ հիմա արդէն ԵՄ մեր գործընկերների հետ բանակցում ենք, թէ ինչպիսի փաստաթուղթ պէտք է ստորագրենք: Ցաւում եմ, որ Եւրամիութեան մեր գործընկերները համարեցին, որ ազատ առեւտրի պայմանագիրը չի կարող համատեղուել Մաքսային միութեանը մեր անդամակցութեան հետ, բայց Ասոցացման համաձայնագիրը միայն Ազատ առեւտրի պայմանագրից չի բաղկացած: Ասոցացման համաձայնագրի հիմնական դրոյթները վերաբերում են քաղաքական բարեփոխումներին: Ես հիմա էլ յայտարարում եմ, որ մենք շարունակելու ենք այդ բարեփոխումները, մենք պատրաստ ենք Վիլնիւսում ստորագրելու համաձայնագրի այդ մասը»:

«Բոլոր պարագաներում, Վիլնիւսում Ասոցացման համաձայ-

Շար.ը էջ 18

# ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՆԱՄԱԿԸ

*ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ*

Ջօրի Բալայեանը, պարզւում է, դեռ ողջ է: Աւելին, նա սարսափելի Բաց նամակ է գրել Փութինին, որն անշուշտ պատմութեան մէջ կը մտնի որպէս հայերի ազգային խայտառակութեան ակտերից մէկը:

Նամակում Բալայեանը մի շարք փաստարկներ է բերում, ըստ որոնց Ղարաբաղը պատկանում է Ռուսաստանին՝ Գիւլիստանի պայմանագրով, որի 200-ամեակը լրացաւ երէկ, քրիստոնէական ընդհանրութեամբ, պարզապէս ուժեղի իրաւունքով: Ջօրի Բալայեանը Փութինին կոչ է անում այցելել Ղարաբաղ եւ վերջապէս այն ճանաչել որպէս Ռուսաստանի մաս:

Խօսակցութիւններ կան, որ մօտ օրերս կարող է Հայաստան այցելել Փութինը: Մենք արդէն գրել ենք, որ նրա այցի պատուին յաղթակամար է պատրաստւում, սակայն, ըստ ամենայնի, նման կամար կարող է լինել Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին:

Ջնայած հայերի հանդէպ ակնյայտ վիրաւորական վերաբերմունքին, Փութինը պէտք է ինչ որ կերպ «փոխհատուցի» հայկական ղեկավարութեան իմիջային կորուստները: Եւ նման «փոխհատուցում» կարող է լինել Ղարաբաղի ճանաչումը, բայց ոչ որպէս անկախ պետութիւն, այլ ռուսական Մաքսային միութեան մաս:

Ջօրի Բալայեանի նամակն ակնյայտօրէն նրա անձնական նախաձեռնութիւնը չէ՝ այն համաձայնեցուած է Երեւանի եւ գլխաւորը՝ Մոսկուայի հետ, որին նա ընդունում է որպէս իր գլխաւոր մայրաքաղաք: Ռուսաստանին յաւերժ հնազանդութեան հաստատման մեծ առաքելութեան համար յատուկ ընտրուել է ծագումով ղարաբաղցի այս մարդը, «Ատրպէյճանի սարսափը», ով կանգնած է եղել շարժման ակունքներում եւ մինչ այժմ կանգնում է Հայաստանի ու Ղարաբաղի ղեկավարների կողքին բոլոր միջոցառումների ժամանակ: Նա վաղուց վեր է ածուել «հայրենասիրական դեկոր»ի», եւ հենց նրա անունն է ամենաշատը սազում Ղարաբաղի կապիտուլեացիայի պակտին: Պարզւում է, հազարաւոր մարդիկ Ղարաբաղում զոհուել են այն բանի համար, որպէսզի Ռուսաստանը կարողանայ վերականգնել Գիւլիստանի պայմանագիրն ու իր գերիշխանութիւնը Ղարաբաղում: Պարզւում է, Ղարաբաղը ոչ թէ Հայաստանի, այլ Ռուսաստանի խնդիրն է:

Մի քանի օր առաջ Ստեփանակերտում տեղի է ունեցել «Արցախի ազգային ազատագրական պայքարը. Գիւլիստանից մինչեւ մեր օրերը» թեմայով կոնֆերանս: Դա Ջօրի Բալայեանի նամակի համար լաւ նախերգանք էր, որը կազմակերպուել էր պաշտօնական մակարդակով, Ղարաբաղի խորհրդարանում: Ամէն ինչ գնում է նրան, որպէսզի Փութինը ժամանի եւ Ղարաբաղը հռչակի Ռուսական կայսրութեան մաս:

Փութինի Եւրասիական միութիւնը ոչ ոք կամաւոր չի ուզում, եւ մնում է ներգրաւել նրանց, ովքեր սովոր չեն անկախութեան, ովքեր գերադասում են ծնկի գալն ու ընծաները: Եւ առաջինն այդ հերթում հայերն են, Ղարաբաղը Ջօրի Բալայեանի գլխաւորութեամբ:

Աւելի լաւ կը լինէր նրան փողտային շուրջերկրեայ ճանապարհորդութեան համար: Նրա ներկայութիւնը Հայաստանում երբեք լաւ չի աւարտուել նրա «հայրենասիրական» կոչերի պատճառով Շուշին ազատագրուելուց յետոյ կրակի մատնուեց, այրեցին ամէն ինչ, վերածելով աւերակների: Հիմա նա հրի է մատնում ողջ Հայաստանը Ղարաբաղի հետ միասին:

Ինչ վերաբերում է նրա «հայրենասիրութեանը» եւ մասնակցութեանը շարժմանը, կարելի է յիշել մի դրուագ, երբ Ղարաբաղի երջանկայիշատակ Նախագահ Արթուր Մկրտչեանը նրան դուրս էր շպրտել իր աշխատասենեակից՝ Ղարաբաղի շահերի դէմ աշխատելու համար:

«ԼՐԱԳԻՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Դատարանը մերժեց Վոլոդիա Աւետիսեանին կալանքից ազատելու միջնորդութիւնը

*Վերաքննիչ դատարանը հաստատեց ազատամարտիկ, պահեստազօրի գնդապետ Վոլոդիա Աւետիսեանին ձերբակալելու՝ Առաջին ատեանի դատարանի որոշումը՝ մերժելով նրան կալանքից ազատելու միջնորդութիւնը: Այսինքն՝ Վոլոդիա Աւետիսեանը եւս մէկ ամիս կալանքի տակ կը մնայ: Այս մասին դատարանի դիմաց հաւաքուած ազատամարտիկներին եւ լրագրողներին տեղեկացրեց նրա փաստաբան Արա Զաքարեանը:*

*«Դատարանը ոչ մի հիմնաւորում չբերեց, հրապարակեց օրէնքի այն մասը, որը ներկայացրել է Առաջին ատեանի դատարանը»,- ասաց նա՝ յաւելելով, որ երեք օրուայ ընթացքում որոշումը կը տրամադրուի իրենց, եւ արդէն պարզ կը լինի մերժման պատճառը:*

*Հարցին, թէ՝ ինչու դատարանը նման որոշում կայացրեց եւ արդեօ՞ք դա քաղաքական նպատակներ է հետապնդում, փաստաբանը պատասխանեց. «Այս պայմաններում, ըստ ձեզ, ուրիշ նպատակ կարո՞ղ է հետապնդել իշխանութիւնը, տուեալ դէպքում՝ ի դէմս դատարանների: Եթէ նոյնիսկ՝ համաներումը տարածւում է տուեալ յօդուածի վրայ, եւ եթէ վատագոյն դէպքում՝ մեղադրական դատավճիռ կայացուէր, ինչի հաւանականութիւնը զրօ է, դատարանը պարտաւոր էր լինելու համաներման կիրառմամբ ազատել նրան*

*Դատական նիստի օրերին, ազատամարտիկներ բողոքի ցոյց անցկացրեցին Վերաքննիչ դատարանի դիմաց՝ ի պաշտպանութիւն Վոլոդիա Ավւետիսեանի: Նրանք այսօր էլ իրենց դժգոհութիւնն ու բողոքը յայտնեցին կայացուած որոշման վերաբերեալ՝ միաձայն պնդելով, որ դատարանը հերթական անարդար վճիռը կայացրեց:*

### «Մաքսային միութեանը միանալու Հայաստանի որոշումը պարտադրուած էր»



Քաղաքագէտ Երուանդ Բոզոեան

*«Մաքսային միութեանը միանալու Հայաստանի որոշումը պարտադրուած էր ՌԴ-ի կողմից»,- լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց քաղաքագէտ Երուանդ Բոզոեանը: Հակառակ դէպքում Եւրամիութեան հետ տարիներով բանակցութիւններ չէին տարուի Ասոցացման համաձայնագրի եւ ազատ առեւտրի գօտու ստեղծման պայմանագրի շուրջ:*

*Մենք ամբողջական պատկերացում չունենք, թէ ինչ է իրենից ներկայացնում մաքսային միութիւնը: Հայաստանը Ռուսաստանի հետ ընդհանուր սահման չունի, սակայն միանում է մաքսային միութեանը»,- զարմանում է քաղաքագէտը՝ յաւելելով, որ մենք պէտք է բարիդրացիական յարաբերութիւններ ունենանք եւրոպական երկրների հետ եւ ռազմավարական յարաբերութիւններ՝ Ռուսաստանի հետ:*

*Երուանդ Բոզոեանն անդրադարձաւ նաեւ Զորի Բալաեանի նամակին՝ ուղղուած ՌԴ նախագահ Վ. Պուտինին:*

*Քաղաքագէտը չի ցանկանում մեղադրել Զորի Բալաեանին, քանի որ նա հին, խորհրդային մտաւորական է. «Ինքը ապրում է այդ ժամանակահատուածով, հին արժէքային համակարգով»:*

*Պարոն Բոզոեանը հակուած է նրան, որ իշխանութիւններն օգտագործել են Զորի Բալաեանին:*

*«Սա իշխանութիւնների կողմից քայլ էր, որով մեսիջ էր ուղարկւում Հայաստանից դէպի Ռուսաստան, որ Հայաստանում դրական վերաբերմունք կայ ՌԴ-ի նկատմամբ: Իշխանութիւնը փորձում է այս քայլով դուր գալ Մոսկուային»:*

*Այն պատերազմը, որը մղուեց ԼՂՀ-ի համար, այն տղաները, որոնք սպաննուեցին, հասկանալի է, որ չսպաննուեցին Ռուսաստանի համար, այլ յանուն Հայաստանի»,- նշեց քաղաքագէտը:*

### «Հայկական ժամանակ». «Երկու միլիո՞ն ենք մնացել»

*Յաջորդ՝ 2014 թուականին նուազելու են մի շարք համայնքներին պետական բիւջէից տրուող դոտացիաները: Այս մասին գրում է «Հայկական ժամանակ» թերթը եւ յաւելում. «Համայնքներում սա բացատրում են նրանով, որ պետբիւջէից տրուած դոտացիաների ծաւալը պայմանաւորուած է բնակչութեան փաստացի թուով:*

*Օրինակ՝ Կապանի քաղաքապետարանից մեր թղթակցին յայտնել են, որ եթէ մինչեւ հիմա բիւջետային ֆինանսաւորման համար հիմք են ծառայել բնակչութեան թուի մասին ՀՀ ազգային վիճակագրական ծառայութեան տուեալները, ապա հիմա հիմք է ընդունւում ոստիկանութեան ներկայացրած ցուցանիշը: Իսկ դրանք խիստ տարբեր են: Օրինակ Կապանի բնակչութիւնը, ըստ քաղաքապետարանի, կազմում է 45 հազար 200, ըստ ԱՎԾ-ի՝ 43 հազար 200 մարդ, իսկ ահա ըստ ոստիկանութեան՝ 37 հազար 600 է:*

*Այստեղից կարելի է մօտաւոր պատկերացում կազմել, թէ որքան է այսօր ՀՀ բնակչութիւնը: Ընդամէնը երկու տարի առաջ նոյն Կապանում, ըստ ԱՎԾ-ի տուեալների, բնակչութիւնը 62 հազար է եղել: Այլ կերպ ասած, ներկայումս Կապանի բնակչութիւնը 40 տոկոսով աւելի քիչ է, քան յայտարարւում էր ընդամէնը երկու տարի առաջ: Եթէ այս հաշուարկը տարածենք ամբողջ Հայաստանի վրայ, ապա կ՚ստացուի, որ երկու տարի առաջ յայտարարուած 3.2 միլիոն բնակչութիւնը հիմա կազմում է ընդամէնը 2 միլիոն»,- գրում է «Հայկական ժամանակը»:*

### Սաքունցն առաջարկում է հարցաքննել Քոչարեանին, Սարգսեանին եւ այլոց



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց

*Մարտի 1-ի 10 սպանութիւնների բացայայտման համար իրաւապաշտպան Արթուր Սաքունցն առաջարկներ ունի՝ հարցաքննել 2008 թուականին բարձր պաշտօններ զբաղեցրած մի շարք անձանց, նրանց թւում՝ նաեւ հանրապետութեան այն ժամանակուայ նախագահ Ռոբերտ Քոչարեանին:*

*Իր առաջարկներով Սաքունցը նոր գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանին եւ Յատուկ քննչական ծառայութեան պետ Վահրամ Շահինեանին է դիմել՝ գրաւոր:*

*«Ըստ էութեան Մարտի 1-ին կատարուել է գործողութիւնների մի ամբողջ շարք, ներգրաւելով ռազմական ոստիկանութեան ստորաբաժանումներին, զինուած ուժերի ստորաբաժանումներին, որոնք իրենց ցանկութեամբ կամ իրենց կամքով չէին կարող յայտնուել այնտեղ եւ կատարել ինքնուրոյն, ինքնակամ գործողութիւններ առանց հրահանգների», - մեկնաբանում է Սաքունցը:*

*Պատասխան չստանալու դէպքում, ասաց իրաւապաշտպանը, կը մտածի, որ պետական մարմիններն անգործութիւն են ցուցաբերում ու դատական կարգով կը բողոքարկի յանցակազմ պարունակող այդ արարքը:*

*«Ազգային անվտանգութեան ծառայութեան պետը այն ժամանակ նոյնիսկ յայտարարեց, որ լաւ էլ արել են, որ լսել են Արզումանեան, Փաշինեան եւ ընդդիմութեան այլ ներկայացուցիչների հեռախօսազրոյցները: Այսինքն նրանք ակտիւ գործողութիւններ են կատարել: Ինչպիսի՞ն են եղել այդ ակտիւ գործողութիւնները եւ այդ ակտիւ գործողութիւնները ինչքանո՞վ են իրաւաչափ եղել, կոնկրետ ի՞նչ հրահանգներ են ստացել, ի՞նչ յանձնարարութիւններ են ստացել, ի՞նչ նպատակով են այդ յանձնարարութիւնները տրուել: Սրանք հարցեր են, առանց որոնց պարզաբանման մենք Մարտի 1-ի յանցագործութիւններ բացայայտում չենք ստանայ: Այդ հարցերը առաւել քան պարզ են», - ասում է Արթուր Սաքունցը:*

### Տիգրան Առաքելեան,- «Օգտագործեցին միջադէպը՝ կանխելու երկխօսութիւնը»

*Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) ակտիւիստ Տիգրան Առաքելեանը համոզուած է, որ իրեն ազատազրկելով՝ իշխանութիւնը ընդդիմութեան հետ երկխօսութեան գործընթացը վիժեցնելու խնդիր էր լուծում: Այդ մասին նա յայտարարեց համաներմամբ իր ազատ արձակումից յետոյ «Ազատութիւն» ռադիոկայանին տուած բացառիկ հարցազրոյցում:*

*«Եթէ յիշում էք, անազատութեան մէջ ես յայտնուեցի այն ժամանակ, երբ Հայ ազգային կոնգրէսը յամառ պայքարի արդիւնքում ազատուեց քաղբանտարկեալներ ունենալուց, Հայաստանը ազատուեց քաղբանտարկեալներ ունենալուց, եւ պայմաններից մէկն էր դա, որպէսզի նստէին իշխանութեան հետ երկխօսութեան, եւ այնտեղ շատ լուրջ հարցեր էին քննարկւում: Եւ այդ պահին այդ գործընթացը վիժեցնելու միակ պայմանը այն կարող էր լինել, որ նորից քաղբանտարկեալ ունենար Հայաստանը», - ասաց Առաքելեանը՝ շարունակելով՝ - «Եւ նրանք այդ միջադէպը, ես չեմ ասում՝ իրենք այդ միջադէպը ստեղծեցին, իրենք այդ միջադէպը օգտագործեցին՝ դա աւելի ճիշդ բնութագրում է, նրանք օգտագործեցին միջադէպը՝ կանխելու երկխօսութիւնը, որովհետեւ այդ օրը, արդէն երկխօսութեան այդ փուլում, շատ կոնկրետ հարց էր դրուած, այնտեղ պատասխաններ գտնելը անհնար էր իշխանութեան կողմից: Եւ նրանք գնացին հին մեթոդների՝ ունենալ քաղբանտարկեալներ, քանի որ Հայ ազգային կոնգրէսը չի երկխօսի քաղբանտարկեալներ ունենալու դէպքում»:*

### «2975-ամեայ քաղաքում 100 տարեկան շէնք չկայ»

*Երեւանը նշում է իր 2795-ամեակը, սակայն այդ տօնը մի խումբ ակտիւիստներ որակեցին կեղծ: Եթէ մայրաքաղաքում օրէցօր վերանում են խորհրդանիշ շէնքերն ու աղճատւում պատմամշակութային յուշարձանները, ապա ակտիւիստները հարց են բարձրացնում՝ ինչպիսի՞ Երեւան ենք մենք ժառանգում ապագայ սերնդին:*

*Փակ շուկայի համար պայքարող «Ազատագրենք յուշարձանը օլիգարխից» նախաձեռնութեան անդամները այսօր նոյնպէս Մաշտոցի պուրակից երթով գնացին Փակ շուկայ:*

*«Քաղաքը նախ եւ առաջ շարունակական յիշողութիւն է»,- «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց նախաձեռնութեան անդամ Գարեգին Զուգասզեանը.- «Մենք աշխարհի տարբեր անկիւններում մենք ունենք մեր պապերի կառուցած շէնքեր, իսկ Երեւանի ներսում, սրտում տեղի ունեցող այս բարբարոսութիւնը, որին մենք երկու տարի շարունակ ականատես ենք լինում, խօսում է այն մասին, որ ինչ-որ շատ լուրջ ախտ է մտել մեր մէջ, եւ այդ ախտից պէտք է ազատուենք»:*

*Շուկայի համար պայքարող ակտիւիստները յատուկ հանդերձանքով էին՝ դեղին գլխարկներով, որոնք, ըստ նրանց, խորհրդանշում են աղճատուած շինութիւնների ապամոնտաժումը:*

*Ակտիւիստ Գաեանէ Բաբլոեանը ցաւով նշեց, որ օրն իր համար տօնական չէ, քանի որ Երեւանի ծնունդը նշելու առիթները տարեց տարի պակասում են:*

*«2975 տարեկան քաղաք ունենք, բայց 100 տարեկան շէնք չունենք քաղաքում: Արդէն իսկ ողբ է»,- ասաց ակտիւիստը:*

# ԼՈՒՐԵՐ

## Գիւլի մայրը հայ է. այս պնդումը դարձեալ շահարկւում է Թուրքիայում

Թուրքիայի ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցութեան նախկին պատգամաւոր, Իզմիրի քաղաքապետի թեկնածու Ջանան Արըթմանը կուսակցութեան ղեկավարին ուղղուած նամակում քննադատել է նրան:

Ինչպէս տեղեկացնում է թուրքական «Դողան» գործակալութիւնը, նամակում Արըթմանը դարձեալ անդրադարձել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլի մօր հայ լինելու մասին պնդմանը:

Արըթմանի գայրոյթը շարժել է կուսակցութեան ղեկավար Քեմալ Քըլըչդարօղլուի՝ գերմանական Frankfurter Allgemeine Zeitung պարբերականին տուած հարցազրոյցը, որտեղ Գիւլի մօր ազգութեան վերաբերեալ Արըթմանի պնդումների մասին հարցին նա պատասխանել է, որ վերջինս այլեւս իր կուսակցութեան անդամ չէ:

Արըթմանը դարձեալ յիշեցրել է, որ «Էգէ» համալսարանի բժշկութեան ֆակուլտետում ուսանելու տարիներին պրոֆեսոր, դոկտոր Ահմեթ Սաթօղլուն, ով նաեւ Աբդուլլահ Գիւլի քեռին է, պատմել է, որ իր տատը հայ է եղել եւ փրկուել է տեղահանութեան ընթացքում:



Թուրքիոյ նախագահ Աբդուլլահ Գիւլ

«Բժշկական ֆակուլտետից իմացել եմ այդ տեղեկութիւնը, սակայն իմ 24 տարուայ քաղաքական կարիերայի ընթացքում երբեք չեմ օգտագործել: Քանի որ որեւէ մեկի էթնիկ ինքնութեամբ չեմ հետաքրքրուել: Յարգել եմ բոլորի էթնիկ արմատները: Անգամ 2007թ.-ին, երբ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնն Իզմիրում ասում էր, որ «կրօնական, մուսուլման նախագահ ենք ընտրելու», ես Աբդուլլահ Գիւլի էթնիկ ինքնութիւնը չբացայայտեցի: Ես ամենից առաջ բժիշկ եմ: Մարդուն որպէս մարդ եմ տեսնում»,-ասել է քաղաքապետի թեկնածուն:

## Դամասկոսում Հայ կաթոլիկ եկեղեցու թեմի շէնքը հրթիռակոծուել է



Դամասկոսի Հայ կաթողիկէ եկեղեցիի շէնքը հրթիռակոծումէն ետք

Դամասկոսում Հայ կաթոլիկ եկեղեցու թեմի շէնքը հրթիռակոծուել է: Բացի դրանից, ինչպէս հաղորդում է Սիրիայի պետական տեղեկատուական ՍԱՆԱ գործակալութիւնը, Դամասկոսի նահանգի Եաբրուդ շրջանում զինեալները երկու դիպուկահար հրացաններ են տեղադրել Սուրբ Աստուածածին եկեղեցու,նաեւ սուրբ Կոնստանտինի եւ Հեղինէի եկեղեցու վրայ, ապա գործի դրել դրանք: Արդիւնքում վնասուել են տաճարների խաչերը: Մի քանի խաղաղ բնակիչ վիրաւորուել է:

Սակրաւորները եւս մէկ պայթուցիկ սարք են վնասազերծել Սուրբ Կոնստանտինի եւ Հեղինէի եկեղեցու դիմաց:

Սիրիայի հայ համայնքի ներկայացուցիչ, Դամասկոսի բնակիչ Նազարէթ Էլմաջեանը NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնել է, որ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Կոնստանտինի եւ Հեղինէի եկեղեցիները յունական են: Նրա խօսքով՝ զինեալների խնդիրը ոչ թէ եկեղեցիների աւերումն է եղել, այլ խաչերի ոչնչացումը:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել էր, որ Սեպտեմբերի 17-ին հրթիռակոծուել էր Դամասկոսի Հայ կաթոլիկ եկեղեցու թեմի շէնքը, որի հետեւանքով տուժել էր շէնքի 3-րդ հարկը, ինչպէս նաեւ մօտակայքում գտնուող հայկական «Լոյս» եւ «փարոս» ազգային գիմնազիաների շէնքերը:

Հայ կաթոլիկ եկեղեցու շէնքը գտնւում է քաղաքի հին հատուածում, Բաբ Թումա շրջանում:

## Փարիզի արուարձանում Հայոց ցեղասպանութեան յիշատակի թանգարան կը կառուցուի

Ֆրանսիական «Սեւր 2015» ասոցիացիան ճարտարապետական մրցոյթ է յայտարարում Հայոց ցեղասպանութեան յիշատակի թանգարանի կառուցման համար:

Ֆրանսիական «Սեւր 2015» ասոցիացիան Ֆրանսիայի հայ համայնքի նախաձեռնութիւնն է, որը նախատեսում է Հայոց ցեղասպանութեան յիշատակի թանգարան կառուցել Փարիզի արուարձանում՝ Սեւր քաղաքում, հայ Մխիթարեանականների քոլեջի տարածքում:

Սա ամբողջ Եւրոպայի կորուածքով իր բնոյթով եզակի եւ մեծամասշտաբ ծրագիր է, քանի որ թանգարանը կ՚ընդգրկուի ապագայ Հայկական ժառանգութեան կենտրոնում, որը 14.000 քմ մակերես կը զբաղեցնի: Բացումը նուիրուած կը լինի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին:

Առաջին եւ երկրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները համապատասխանաբար 3000 եւ 2000 եւրօ պարգեւ կը ստանան:

## ՀԱԾ ղեկավարը՝ ի պատասխան Ադրբեջանի ստայօդ մեղադրանքների. Շունը հաչում է, քամին՝ փչում

ՌԴ ԱԴԾ-ի ղեկավար, ԱՊՀ անվտանգութեան մարմինների եւ յատուկ ծառայութիւնների ղեկավարների խորհրդի նախագահ Ալեքսանդր Բորտնիկովը Ադրբեջանի մշտական մեղադրանքները հաստատող տեղեկութիւն չունի, ըստ որոնց Լեռնային Ղարաբաղի տարածքը որպէս Աֆղանստանից թմրանիւթեր տեղափոխելու կամ ահաբեկիչներ պատրաստելու միջանցք է օգտագործւում:

«Նման տեղեկութիւն ես չունեմ: Ես ոչինչ ասել չեմ կարող տուեալ փուլում», - յայտարարել է Բորտնիկովը՝ Հայաստանում կայացած ԱՊՀ անվտանգութեան մարմինների եւ յատուկ ծառայութիւնների ղեկավարների խորհրդի 35-րդ նիստն ամփոփող մամուլի ասուլիսում:

Իր հերթին Հայաստանի ԱԱԾ-ի տնօրէն Գորիկ Յակոբեանը նման մեղադրանքները ստայօդ է անուանել: Յակոբեանն ընդգծել է, որ բացի Ադրբեջանի իշխանութիւններից եւ յատուկ ծառայութիւններից, ոչ մի այլ երկիր կամ կառոյց ոչ մի նման բան չի յայտարարել: «Շունը հաչում է, քամին՝ փչում», - նշել է Գորիկ Յակոբեանը:

## Հայաստանի նախագահը վիլնիւսեան գագաթնաժողովին մասնակցելու պաշտօնական հրաւէր է ստացել

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը Նոյեմբերի 28-29 կայանալիք վիլնիւսեան գագաթնաժողովին մասնակցելու պաշտօնական հրաւէր է ստացել:

Լիտվայի փոխարտգործնախարար Անդրիուս Կրիվասը պաշտօնական հրաւէրները փոխանցել է Արեւելեան գործընկերութեան 6 երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի դեսպաններին:

Վիլնիւսեան գագաթնաժողովին մասնակցելու հրաւէրը ստորագրել են Լիտվայի նախագահը, Եւրոպական խորհրդարանի նախագահ Հերման Վան Ռոմպոյը եւ Եւրայանձնաժողովի նախագահ Ժոզէ Մանուէլ Բարոզոն:

Ինչպէս տեղեկացնում է Լիտվայի արտաքին գերատեսչութեան պաշտօնական կայքէջը, Լիտվայի փոխարտգործնախարարը, յանձնելով պաշտօնական հրաւէրները, ասել է, որ Լիտվան մեծ կարեւորութիւն է տալիս Արեւելեան գործընկերութեանը:

Անդրիուս Կրիվասը ընդգծել է, որ Վիլնիւսեան գագաթնաժողովը կարեւոր քայլ է Արեւելեան գործընկերութեան իւրաքանչիւր երկրի եւ Եւրամիութեան միջեւ երկխօսութեան եւ համագործակցութեան ճանապարհին: Լիտվայի փոխարտգործնախարարը նաեւ ասել է, թէ գագաթնաժողովի իրական արդիւնքները կ՚օգնեն պատրաստակամ երկրներին շարունակել Եւրամիութեան հետ տնտեսական եւ քաղաքական համատեղելիութեան ուղղութեամբ իրականացուող քայլերը:

## Հայաստան դուրս մնաց

Շարունակուած էջ 1-էն

հաւաքականը, Հայաստան 2-1 արդիւնքով հասաւ յաղթանակի:

10 խաղի մէջ վաստկելով 22 կէտ, Իտալիա հասաւ յառաջիկայ տարի Պրազիլի մէջ տեղի ունենալիք Աշխարհի Բաժակի աւարտականներուն: 13 միաւորով Հայաստան թէեւ իր խմբակին մէջ գրաւեց 5-րդ տեղը, սակայն միայն 3 կէտով ետ մնալով երկրորդ դիրքը գրաւող Տանիմարքայի հաւաքականէն:

Այս մրցաշարքի ընթացքին Հայաստան արձանագրեց իր ֆութպոլի պատմութեան լաւագոյն արդիւնքները, յաղթանակներ արձանագրելով Չեխոսլավաքիոյ, Տանիմարքի եւ Պուլկարիոյ նման երկիրներու դէմ եւ հաւասարելով Իտալիոյ հետ:

Հայաստան առաջին անգամ ըլլալով Աշխարհի Բաժակին հասնելու առիթը ունէր, սակայն Եւրոպայի ամէնէն տկար խումբերէն՝ Մալթայի դէմ կրած պար-

## Զօրի Բալաեան չընդունիր

Շարունակուած էջ 1-էն

տեմ ինչ ասեմ, բայց նամակում չկայ այդ բանը: Քննադատութիւնը չեմ ընդունում, որովհետեւ նրանք էլ չեն հաւանաբար կարդացել այն»:

Ինչ կը վերաբերի նամակի հասցէատիրոջմէ՝ Փութինէն որեւէ պատասխան ստանալուն, Զօրի Բալաեան ըսած է, որ կրնայ արձագանքը եղած ըլլալ, բայց ինքը տեղեակ չէ:

Հայաստանի իշխանութիւնները այս հարցի շուրջ լռութիւն կը պահեն, մերժելով որեւէ ձեւով դատապարտել Բալաեանի այս քայլը:

տութիւնը, ինչպէս նաեւ սեփական հարկի տակ կորսնցուցած միաւորները եկան խանգարելու այդ նպատակի իրականացումը:

## HURRIYET. ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԱՅԱՅՏԱԾ ԹՈՒՐՔ ԳՐՈՂԻՆ ՅԱՆԴԻՄԱՆՈՒՄ ԵՆ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ






Թուրքիայի լրագրողների ասոցիացիայի նախագահ Ահմեդ Աբակայը, որն իր գրքում բացայայտել է իր հայութիւնը, ասել է, որ իր բարեկամները խստօրէն են արձագանքել այդ փաստին: Գրում է «Հիւրիեթ» թերթը:

«Հոշանի վերջին խօսքը» գրքում Աբակայը պատմել էր իր մօր պատմութիւնը, որը մահուանից մի քանի շաբաթ առաջ որդուն խոստովանել էր, որ հայ է ու որ Հայոց ցեղասպանութեան ժամանակ ալեւի մահմեդականներն են իրեն որդեգրել:

«Մայրս իր պատմութիւնը պատմել է 13 տարի առաջ, դրանից շատ չանցած մահացաւ: Ես կարողացայ դրա մասին գրել միայն 10 տարի անց, որովհետեւ ես կասկածներ ունէի: Ես դժուարութեամբ այն գրեցի, բոլոր գլուխներում արցունքների մէջ էի ողողւում եւ չէի կարողանում շարունակել: Ես չէի պատկերացնում, որ այդքան յուզական կը լինի ինձ համար դա գրելը: Մօրս թողել էին ինչ-որ մարդկանց դռան մօտ, ինչպէս անմեղ փիսիկի ու այդ միտքն ինձ վշտի մէջ էր գցում», - պատմել է Աբակայը «Հիւրիէթ»-ին:

Աբակայն ասել է, որ իր մայրն իրեն մի գաղտնիք է ասել, որը նա իր մէջ էր պահում 82 տարի, պայմանով, որ մինչեւ իր մահը նա ոչ ոքի չպիտի ասի:

«Մայրս խնդրեց խոստանամ, որ իր պատմութիւնը չպատմեմ կնոջս, դստրերիս կամ իր քրոջը, քանի դեռ նա ողջ է: Մօրս մահուանից յետոյ ես պատմեցի այն իմ նեղ շրջանակին՝ իմանալու, թէ արդեօք կան այլ գաղտնիքներ, որոնց մասին մենք տեղեակ չենք: Բայց իմ քոյրն ասաց, որ սրա մասին չբարձաձայնեմ, քանի որ ես լրագրող եմ ու յիշեցրեց, թէ ինչ եղաւ Հրանտ Դինքի հետ: Իմ ազգականների մեծամասնութիւնը չէին կարողանում ընդունել իրենց նոր ինքնութիւնը», - ասել է Աբակայը՝ աւելացնելով, որ որոշ ազգականներ հերքեցին այդ պատմութիւնը, միւսները պնդեցին, թէ նրա մայրը շատ ծեր էր, որ գիտակցէր, թէ ինչ է խօսում: Նա ասել է, որ իր գրքի համար կատաղի արձագանքներ է ստացել ընտանիքի որոշ անդամներից:

«Հօրեղբօրս երեխաներն ասացին՝ ո՞նց ես համարձակւում մեր հօրաքրոջը հայ կոչել ու վիրաւորել մեր ընտանիքի համբաւը: Դու պէտք է հեռացնես քո գրքից հայերին վերաբերող մասը, հակառակ դէպքում մենք կը հեռացնենք գիրքը գրապահարաններից», - ասել է Աբակայը:

Հեղինակը պատմել է, որ իր մայրը ժամանակին խօսել է իր քոյրերից մէկի հետ, որը մնացել էր հայերի մօտ, բայց չի մանրամասնել այդ դէպքի մասին: Յետոյ նա պարզել է, որ այդ քոյրը Էրզրումի Աշքալէ շրջանից է. «Ես ուզում եմ ուսումնասիրել իմ ինքնութիւնը, բայց ես կասկածում եմ, որ կարող եմ առաջ գնալ: Հիմա ես գոհ եմ, որ վերադարձրել եմ իմ ինքութիւնը», - ասել է Աբակայը:

## ՌՈԲԵՐՏ ՖԻՍՔ. ԱՄԷՆ ԱՄԻՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՆՈՐ ԱՊԱՑՈՅՑՆԵՐԻ ԹԻՒՆ ԱՒԵԼԱՆՈՒՄ Է

Թուրքիան պատրաստւում է «մեղմել» Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցը՝ Անտանտի երկրների դէմ յաղթանակը տօնելով: Այս մասին բրիտանական «The Independent»-ում տպագրուած յօդուածում նշում է լրագրող Ռոբերտ Ֆիսքը:

Նրա խօսքով՝ այդ ամէնի հետ մէկտեղ, ամէն ամիս աւելանում են Հայոց ցեղասպանութեան՝ որպէս պատմական փաստի, ապացոյցները, որոնք Թուրքիան շարունակում է հերքել: Այս անգամ ապացոյցները ներկայացուած են բրիտանացի բժիշկ Ալէք Գլենի յուշագրութիւնում: Նա դրանք հասցէագրել է իր որդիներին, որոնք էլ իրենց հերթին վերջերս տպագրել են դրանք:

Յիշողութիւնները ներկայացուած են որպէս գիրք՝ In the Front Line: A Doctor in War and Peace վերնագրով: Գլենը բացայայտումներ է արել հայերի ճակատագրի եւ այն մասին, թէ ինչպէս է Թուրքիան 1918 թ. փորձել իր ազդեցութիւնը տարածել արեւելքի վրայ:

Գլենը գրում է, որ Իրանից դէպի հիւսիս-արեւելք՝ Պաքուի ուղղութեամբ, հնդկական-բրիտանական ուժերն օրական տեսել են տասնեակ հազարաւոր հայ փախստականների: «Դա զարմանալի եւ ողբերգական տեսարան էր: Ժամանակ առ ժամանակ մենք անցնում էինք ճամբեզրին մահացող մարդու կողքով, կամ էլ դիակի, որը կիսով չափ կերել էին շները կամ բորենիները: Մենք օգնում էինք երիտասարդներին, նրանց, որոնք կարող էին ապրել: Նրանց նստեցնում էինք ջորիների վրայ եւ հասցնում մօտակայ գիւղերը: Բրիտանացի բժիշկ Սոլսբերի Քրեյգը աւելի ուշ պատմել է ինձ, թէ ինչպէս է օգնել ճանապարհին հանդիպած տարեց փախստականի: Մահից առաջ նա կաշուէ գօտի է տուել, որը լի է եղել ոսկեդրամներով: Նա խնդրել է այդ գումարն օգտագործել փախստականներին օգնելու վրայ»,-գրում է բժիշկը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՐՑԱԽԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՂԷՏԸ

Հայաստանի եւ Արցախի ընդերքի հարստութեան անխիղճ շահագործումը ահագնացող թափով կը շարունակուի, անտեսելով մեր երկրի բնապահպանութեան ու հայրենաբնակ ժողովուրդի առողջութեան սպառնացող ահաւոր հետեւանքները:

Ըստ Համաշխարհային Դրամատան վիճակագրութեանց, անցնող տարիներուն Հայաստանի մէջ ծննդեան թերութեանց, ամլութեան, շնչառական խնդիրներու եւ քաղցկեղի տոկոսային թիւը կտրուկ աճած է: Անտառային շրջաններու նուազումը, հանքերու անխնայ շահագործումն ու թունաւոր աղբի անհաշիւ արտահոսքի պատճառաւ բնութեան ապականումը, կը մթագնեն մեր ապագան: Այս մտահոգութիւնէն մեկնած, Հայաստանի տարածքին ծնունդ առած են քաղաքացիական եւ բնապահպանական շարժումներ, որոնք կ՛աշխատին առաջքը առնել գալիք աղէտին:

Այս շարժումներէն կազմուած է Համահայկական Բնապահպանական Ճակատը (ՀԲՃ), որ հրապարակային նախաձեռնութիւն մը ըլլալով, կը ձգտի ժողովուրդը տեղեկացնել եւ զգաստացնել այն անհանդուրժելի հետեւանքներուն մասին, որ այս անխնայ շահագործումները կը սպառնան Հայաստանի եւ Արցախի ապագային: ՀԲՃի նպատակն է Հայաստանի բնութեան անաղարտ պահպանումը, տնտեսութեան բանական ու համաչափ զարգացումը եւ սոցիալական արդարութեան ապահովումը: Գիտակցելով, որ Հայաստանի բնութեան պահպանութիւնը սերտօրէն առնչուած է Հայաստանի պետութեան պահպանութեան հետ, հետեւաբար ՀԲՃն կը միտի ներգրաւել համայն հայութեան ներուժը այս նպատակներու իրագործման համար: Այս նպատակաւ, Քալիֆորնիա կը ժամանեն ՀԲՃի անդամներ? Եղիա Ներսեսեանը, Աննա Աղլամազեանը եւ Լեւոն Գալստեանը: Հոկտեմբեր 14էն 24, տաս օրերու վրայ, անոնք հրապարակային ելոյթներ պիտի ունենան զանազան քաղաքներու մէջ, քննարկելու Հայաստանին եւ Արցախին սպառնացող բնապահպանական աղէտներուն վտանգը: Լոս Անճելըսի մէջ տեղի պիտի ունենան երեք ելոյթներ.

1. Հինգշաբթի, Հոկտ. 17ին ժամը 7ին, Կլենտէյլի Հանրային Կեդրոնական Գրադարանին մէջ պիտի կայանայ հանդիպում մեր համայնքի հետ:

2. Ուրբաթ, Հոկտ. 18ին ժամը 7ին, Կլենտէյլի Անուշ սրահին մէջ (401 W Colorado) պիտի կայանայ դրամահաւաք ի նպաստ ՀԲՃի աշխատանքներու ֆոնտին ու առաջին անգամ ըլլալով ԱՄՆի տարածքին պիտի ցուցադրուի «Հայաստանի Կտրող Ողնաշարը» բնապահպանական եւ փաստագրական ժապաւէնը:

3. Կիրակի, Հոկտ. 20ին ժամը 4ին, Արարատ Տան Էսքիճեան Թանգարանին մէջ պիտի կայանայ քննարկման հանդիպում:

Վերեւ նշուած հանդիպումներու կողքին, մեր հիւրերը պիտի այցելեն զանազան համալսարաններ, հանդիպելու հայ ուսանողութեան հետ: Բոլոր հանդիպումներուն մուտքը ազատ է, բայց նուիրատուութիւնները գնահատանքով կ՛ընդունուին:

## ՈՒՐՖԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱԽՈՌԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ Է

Պոլսոյ «Մարմարա» թերթին համաձայն Ուրֆայի շրջանի Կիւմիւշ գիւղի հայկական եկեղեցին ներկայիս ախոռի վերածուած է: Ասիկա պատմական եկեղեցի մը ըլլալով տասը տարի առաջ հայերու կողմէ նորոգութեան ենթարկուէր է:

Բայց մինչ կը սպասուէր որ երեք տարի առաջ վերանորոգուած եկեղեցին զբօսաշրջութեան առջեւ բացուէր, այդ մէկը տեղի չէ ունեցած: Թէեւ եկեղեցիին դրան առջեւ երեք լեզուներով նշանատախտակ մը կախուած է, բայց եկեղեցին զբօսաշրջութեան առջեւ իր դռները բանալու կարելիութենէն շատ հեռու է: Իսկ տեղացիներն իշխանութիւններէն բացատրութիւն կը սպասեն թէ ինչու այս վիճակին մատնուած է վերոյիշեալ պատմական յուշարձանը:

## ԿԱՏԻԱ ՓԵԼԹԵՔԵԱՆԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԼԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԱՌԿԱՅ ՆԻՒԹԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Անկախ հետազօտող, Պէյրութի Ամերիկեան համալսարանում եւ Լիբանանի «Հայկազեան» համալսարանում անգլերէնի նախկին դասաւանդող Կատիա Մինասս Փելթեքեանը երկհատորեակ է հրատարակել, որը կրում է «Հայոց ցեղասպանութեան ժամանակները. 1914-1923թթ.-ին բրիտանական մամուլի հաղորդագրութիւնները» անունը:

Գրքի երկու հատորներում պարունակւում է աւելի քան 1000 նիւթ, որոնք հաւաքուել են 1914-1923թթ.-ի բրիտանական մամուլից: Յօդուածները, հաղորդագրութիւնները, խմբագրական յօդուածները, նամակները խմբագրութեանը, յայտարարութիւններն ու Բրիտանիայի խորհրդարանի լսումները կ՛օգնի ընթերցողին պատկերացնել, թէ բրիտանացիները որքան պաշտօնական ու ոչ պաշտօնական ուշադրութիւն են ցուցաբերել հայ ժողովրդին ու ներկայիս Արեւելեան Թուրքիայի տարածքում գտնուող հայկական նահանգներում այն ժամանակ տեղի ունեցած հայերի զանգուածային սպանութիւններին:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՅՈԳԵՅԱՆԳԻՍՏԻ ՄԸ ՍՊԱՍՈՒՄՈՎ

*ԱԻՆԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ*

Չորս տարիներ առաջ, 10 Հոկտեմբերին, ատամներու կճրտումով, յօնքերու պռստումով եւ ջիղերու յումպէտս խանգարումով կը հետեւէինք Ցիւրիխի (Զուիցերիա) մէջ տեղի ունեցող քաղաքական լուրջ իրադարձութեան մը: Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարները, միջազգային ուժերը ներկայացնող դիւանագէտներու աչալուրջ հսկողութեան ներքեւ, կը ստորագրէին «Հայ-Թրքական Արձանագրութիւններ» կոչուող փաստաթուղթը: Լուսարձակները կեդրոնացած էին հոն՝ ուր երկու դարաւոր թշնամիներ կը փորձէին կարգաւորել իրենց միջեւ գոյութիւն ունեցող բազմաթիւ թնճուկներ: Հակառակ Ահմէտ Տաւուտօղլուի եւ Հիլըրի Քլինթընի լայն ժպիտներուն, Էտուարտ Նալպանտեանի յոգնադէմ կեցուածքը կը մատնէր մթնոլորտին ոչ անկեղծ եւ արհեստածին բնոյթը:

Ինչո՞ւ. որովհետեւ այդ օրերուն հայ կեանքը երկփեղկուած էր երկու հակադիր կողմերու: Թեր ու դէմ դիրքորոշումները շիկացած էին Հայաստանի եւ սփիւռքի տարածքին: Ընդհանուր առմամբ Նախագահ Սերժ Սարգսեանի շուրջ համախմբուած ուժերն ու արեւելահայ հատուածին կարեւոր տոկոսը ջատագովներն էին Թուրքիոյ հետ յարաբերութեանց կարգաւորման, մինչ՝ աշխարհասփիւռ հայութեան կարեւոր տոկոսը ոչ միայն վերապահ էր նշեալ զարգացումին նկատմամբ, այլ՝ բացարձակ մերժողական, կոչտ ըլլալու աստիճան: Պատահական չէր, որ նախագահին սփիւռքեան այցելութիւնները, նշեալ արձանագրութիւններուն ստորագրումէն առաջ, դիմաւորուեցան գազազած հայ ցուցարարներու կարծր արտայայտութիւններով:

Արեւմտահայութեան շառաւիղները ընդվզումով եւ զայրոյթով ընկալեցին Թուրքիոյ հետ մերձեցման այդ ոչ համոզիչ փաստը:

Տեղին է ընդգծել ու զարմանալ, որ Հայաստանի տարամէտ եւ իրարու հակընդդէմ ուժերը համակարծիք էին ու միացած Թուրքիոյ հանդէպ վարուող քաղաքականութեան շուրջ. անոնք ա՛յս կէտին մէջ միաբան էին: Իսկ աւանդական ուժերն ու արմատական կողմերը, թէկուզ իրարմէ տարբեր գաղափարախօսութիւններով, Թուրքիոյ հետ մերձեցման դէմ միասնական էին ու միաբերան: Տուեալ պահուն, քաղաքական խճանկարը նոր քարտէզ մը ստեղծած էր հայ կեանքէն ներս:

Բացայայտ է, որ հայ-թրքական յարաբերութիւնները իրենց համընդգրկուն պարունակով բազմերես, բարդ ու խրթին գործընթաց մըն է. քաղաքական, տնտեսական, մշակութային, պատմական դառն յիշողութեան երեսներու կողքին եւ ամենակարեւորը հոգեբանական աներեւոյթ պատնէշի մը առկայութիւնն է, որ ծանրօրէն նստած է հայ մարդու հոգեմտաւոր կերտուածքին վրայ: Թրքական կողմին հետ որեւէ շփում, առանց հոգեբանական կաշկանդումի եւ նախապաշարումի, անհնար է պատկերացնել: Այս առումով, այդ օրերուն, չեշտուեցաւ խիստ մատնանշելի երեւոյթ մը. արեւելահայ հատուածը Ցիւրիխի իրադարձութեան մօտեցաւ աւելի միտքով եւ տնտեսական հաշուարկներէ մղուած. մինչ՝ սփիւռքահայ հատուածը հարցը ընկալեց սիրտով ու զգացումով եւ զայն դիտեց անցեալի յիշողութեան տեսանկիւնէն: Այսինքն՝ Երեւանի վարիչները որդեգրեցին սառնամտութեան տարբերակը, աշխարհացրիւ հայութիւնը՝ տաքսրտութեան տարբերակը:

Սակայն, ո՞ւր է շօշափելի արդիւնքը Ցիւրիխի մէջ ստորագրուած արձանագրութիւններուն: Չորս տարիներ ետք, այժմ ո՞ւր կը գտնուի ան:

Հայրենի դիւանագէտները, նշեալ արձանագրութիւններուն ստորագրման նախօրէին, կը պնդէին, թէ այդ պիտի ըլլայ «առանց նախապայմաններու». ակնարկելով՝ որ թրքական կողմին պիտի չգիջինք Ղարաբաղի հարցով եւ հայկական ցեղասպանութեան միջազգային ճանաչման միտուած քարոզչութեան առումով: Ուրեմն՝ մերժուած էին թրքական նման առաջարկներ:

Այս, ի հարկէ, Թուրքիոյ հանդէպ թերահաւատներու, կասկածամիտներու եւ վերապահներու ուղղուած մշուշոտ կարծիքներու փարատումին միտուած պարզաբանում մըն էր: Բայց, միթէ՞ մենք նախապայման չունէինք, որ նոյնինքն հայկական ցեղասպանութեան ճանաչումն է. ինչպէ՞ս սկսիլ խճճուած երկարաշունչ գործընթաց մը, որ թաթխուած է մէկ ու կէս միլիոն նահատակներու արեամբ, խաթարուած է հայրենիքի ու կալուածներու բռնախլմամբ, ոտնահարուած իրաւունքներով եւ սրբապղծուած վանքերով ու եկեղեցիներով:

Չորս տարիներ ետք վերստին յիշելով այդ արձանագրութեանց տառն ու ոգին, պիտի նկատենք, որ միջազգային ջանքերն ու հայ կեանքին խռովայոյզ օրերը ոչինչի ծառայած ժամավաճառութիւններ էին. քանզի Անգարայի մօտ կը պակսի ամենատարրական նախանշանը՝ տրամադրութիւնը դէպի բնականոն յարաբերութիւններ: Եւ ի զուր չէ, որ արձանագրութիւնները մնացին թուղթի վրայ լոկ: Քաղաքական կամքի բացակայութեան եւ հոգեբանական պատրաստուածութեան չգոյութեան պայմաններուն արձանագրութիւնները չարժանացան Թուրքիոյ Ազգային Ժողովին վաւերացման:

Այս ծիրէն ներս, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 19-րդ եւ 20-րդ համագումարները եկան հաստատելու, որ դեռ վաղ անցեալին, հակաթրքական պայքարի առաջին գիծին վրայ գտնուող կուսակցութեան համար դիւանագիտական եւ քաղաքական ցուցադրութիւններ ոչ միայն անիմաստ են, այլ՝ ձախողութեամբ աւարտած փորձութիւններ. փորձառութեամբ փաստուած ճամարտակութիւններ: Ցարդ թրքական կողմէն առաջին քայլն իսկ առնուած չէ յարաբերութեանց բնականոնացման ուղղութեամբ, ապա ինչպէ՞ս ապաւինիլ թրքական ժպիտներուն եւ ակնկալել որ օր մը կրնայ յաջողութեամբ պսակուիլ Ցիւրիխի մէջ սկսած դիւանագիտական ցուցահանդէսը: Ահա թէ ինչու այդ արձանագրութիւնները արժանի են միայն հոգեհանգիստի:

Վերջերս, Հայաստանի մէջ կայացած Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 20-րդ համագումարը անգամ մը եւս հաստատեց եւ

Շար.ը էջ 18


ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նուիրուած՝
Մեսրոպ Մաշտոցի Ծննդեան 1650-Ամեակին

Շաբաթ՝ Հոկտեմբեր 26, 2013
Վուտպըրի Համալսարան - Woodbury University
7500 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504
կ.ա. ժամը 9:00-էն մինչեւ կ.ե. ժամը 5:00

ԴԱՍԱԽՕՍՆԵՐ՝
Հայր Լեւոն Զէքիեան
«Մեսրոպ Մաշտոց Անուան Խորհուրդը Տասնվեց Դարերու Հայեցակէտէն»
Դոկտ. Աբէլ Քինյ. Մանուկեան
«Հոգեւոր Պետականութեան Կերտման եւ Ազգային Ինքնութեան Պահպանման Ծրագիրը Ե. Դարուն եւ Այսօր»
Դոկտ. Աբրահամ Տէրեան
«Կորիւնի «Վարք Մաշտոցի» Կառուցուածքն ու Նպատակը»
Դոկտ. Սրբուհի Հայրապետեան
«Ազգային Ինքնութեան Արմատաւորումը եւ Հիմնաւորումը»
Դոկտ. Երուանդ Զօրեան
«Հայկական Համացանցային Համալսարանի Առաքելութիւնը եւ Հայկական Ինքնութեան Ամրակայումը»
Դոկտ. Յակոբ Կիւլլիւճեան
«Լեզուի Հեռանկարները Պատկանելիութեան եւ Ինքնութեան Յարաբերականացման ու Համաշխարհայնացման Դիմաց՝ Ե. Դարուն եւ Այսօր»
Դոկտ. Ռոպըրթ Հիւսէն
«Մեսրոպ Մաշտոց եւ Մխիթար Սեբաստացի.
Հայ Ժողովուրդի Երկրորդ եւ Երրորդ Լուսաւորիչները»

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ
Արարատ Էսքիճեան Թանգարան
Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն
Նոր Սերունդ Մշակութային Միութիւն
Պոլսահայ Միութիւն

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
Մուտքի տոմսերը սահմանափակ են: Ձեր անունը կրնաք արձանագրել հեռաձայնելով
818.357.1606 կամ maggiegoschin@gmail.com եւ կամ Facebook-ի վրայ Nor Seround




# ՎԱՐՔ ՉԱՅԼԱՄԱՑ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԸ ԶԲԱՂՈՒԱԾ ԷՐ ՍՔՈԼԱՍՏԻԿ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Երբ որեւէ քննադատական բառ է արտասանւում կամ գրւում Մայր Աթոռի բարձրաստիճան հոգեւորականների, եկեղեցում տիրող բարքերի մասին, գլխաւոր փաստարկը, որ բերւում է դրա դէմ, շատ պարզունակ է՝ «Դուք անհաւատ էք»: Դա, իմ կարծիքով, փաստարկ չի, որովհետեւ հնարաւոր է ագնոստիկ լինել, բայց հաւատարիմ մնալ հոգեւոր բարձր արժէքներին: Հէնց ագնոստիկ, ոչ թէ աթէիստ, որովհետեւ աթէիզմը նոյն մոլեռանդ հաւատն է՝ միայն թէ «մինուսի» նշանով:

Աթէիզմը ստիպել էր պատմութեան ընթացքում տարբեր տեսակի «բոլշեւիկներին» (ոչ միայն 1917 թուականի ռուսական, այլեւ, օրինակ, 1789 թուականի ֆրանսական յեղափոխութեան ժամանակ) քանդել տաճարներն ու հալածել հոգեւորականներին:

20-րդ դարի ֆրանսացի փիլիսոփայ Ժան-Պոլ Սարտրը շատ դիպուկ նկատել է, որ «Աթէիստը մանեակ է, որն այնքան է հրապուրուած Աստծով, որ ամէնուր տեսնում է նրա բացակայութիւնը եւ չի կարող բերանը բացել՝ առանց նրա անունը տալու»:

Թողնենք, ուրեմն, բոլոր մոլագարներին («պլուս» կամ «մինուս» նշանով) եւ փաստենք, որ, անկախ իր հաւատի խորութիւնից, ցանկացած հայ, առաւել եւս՝ ՀՀ ցանկացած քաղաքացի, իրաւունք ունի իր կարծիքը յայտնել Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան սպասաւորների եւ բարքերի մասին: Մանաւանդ, երբ խօսքը, օրինակ, Մեռելոցի մասին է: Ի՞նչ է՝ այն վերաբերւում է միայն հաւատացեալների՞ն: Ոչ, կառավարութիւնը պարտադրում է ոչ միայն մեզ՝ հայ քրիստոնեաներիս, այլեւ ՀՀ բոլոր քաղաքացիներին՝ այդ թւում այլ դաւանանքների հետեւորդներին եւ ոչ մի դաւանանք չունեցողներին, տարին 5 անգամ չաշխատել Երկուշաբթի օրը եւ աշխատել Շաբաթ օրը: Դա անյարմար է բիզնեսի առումով, որովհետեւ մասնաւոր ձեռնարկութիւններից շատերը (օրինակ, ԶԼՄ-ները) շարունակում են աշխատել սովորական ռեժիմով, ինչպէս նաեւ հակասութեան մէջ է մտնում աշխարհիկ պետութեան սկզբունքների հետ:

Անցած շաբաթ մեր բարձրաստիճան եկեղեցականները, կարծես թէ, բացառիկ հնարաւորութիւն ունէին քննարկելու այդ բոլոր խնդիրները: Բայց, դատելով պաշտօնական հաղորդագրութիւններից, Եպիսկոպոսաց ժողովի մասնակիցները բացարձակապէս մտահոգուած չեն իրենց՝ եպիսկոպոսների հեղինակութեան անկմամբ եւ զբաղուել են այնպիսի հարցերով, որոնք Հայաստանում, յամենայնդէպս, շատ քչերին են յուզում:

Մկրտութեան ծէսի միասնականացման եւ սրբերի շարքին դասելու խնդիրը, եթէ դրանք այսքան կարեւորւում են, կարելի է լուծել «աշխատանքային կարգով», նոյնիսկ՝ իրար էլեկտրոնային նամակներ ուղարկելով: «Բենթլի», օֆշոր, Նորվան սրբազան, Երուսաղէմի պատրիարք՝ ահա թէ ինչն է յուզում Հայաստանի հասարակութեանը: Շրջանցել այդ հարցերը, ձեւացնել, թէ դրանք գոյութիւն չունեն, առնուազն ջայլամութիւն է նշանակում: Ժողովականները նման էին միջնադարեան սխոլաստ աստուածաբաններին, որոնք հաւաքւում եւ թաք-թաք վիճում էին, թէ քանի հրեշտակ կը տեղաւորուի ասեղի սուր ծայրին:

Մինչդեռ հարցը սկզբունքային է. արդեօք հոգեւորականը իր համեստութեամբ, իր զուսպ, ժուժկալ վարքով պէ՞տք է մեզ՝ հաւատացեալներիս օրինակ ծառայի եւ ճանապարհ ցոյց տայ: Թէ՞ հիմա դա պարտադիր չէ, եւ բարձրաստիճան հոգեւորականն այսօր ոչնչով չպիտի տարբերուի աշխարհիկ իշխանութեան իր «ախպերութիւնից», ապրի նոյն արժէքներով եւ խցկուի նոյն բիզնեսների մէջ:

Նոր Կտակարանում մի դրուագ կայ, երբ մի հարուստ երիտասարդ մօտենում է Տիրոջը եւ հարցնում՝ թէ ի՞նչ պէտք է անի՝ յաւիտենական կեանք մտնելու համար: Յիսուսն ասում է, որ պէտք է պահել պատուիրանները: Երիտասարդը, պարզւում է՝ դա անում է մանկուց: «Ինձ դեռ ի՞նչն է պակասում», - հարցնում է նա: «Եթէ ուզում ես կատարեալ լինել, գնա՛, վաճառի՛ր, ինչ ունես, եւ տուր աղքատներին. այդպիսով երկնքում գանձ կ'ունենաս, եւ ապա արի՛ իմ յետեւից» (Մատթէոս, 19»: Երիտասարդը դրան պատրաստ չէր: Դրան պատրաստ չեն նաեւ մեր եպիսկոպոսները, որոնք ոչ միայն չեն կատարում Աստծոյ պատուիրանները, այլեւ շալակել են իրենց նիւթական հարստութիւնները եւ այդպիսով ուզում են գնալ Տիրոջ յետեւից: Մեզ էլ հետները տանեն:

# ՍԻՐՈՅ ԲԱԺԱԿԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՏՐԱԿԸ

ՎԱՐՈՒԺԱՆ Դ.

Հայ եկեղեցին, իր դարաւոր պատմութեան ընթացքին, մեր ժողովուրդի կեանքին մէջ արձանագրած է ամէնէն լուսաւոր էջերը հայ մշակոյթի պահպանման ու զարգացման մէջ, որոնք ողնասիւնն են ժողովուրդի գոյատեւման: Այդ մաքուր ու առողջ մթնոլորտին մէջ ապահոված է ժողովուրդի առողջ հոգին եւ ամրակուռ երթը, իր դիմագրաւած ամէնէն դժնդակ ու մահացու պայմաններուն տակ: Եկեղեցին, որ ժողովուրդն իսկ է, առողջ է, երբ ժողովուրդը առողջ է, ամուր է, երբ ժողովուրդը ամուր է: Նուիրեալ հոգեւորականները կոչուած են միայն հսկիչը, քաջալերողն ու ջատագովը ըլլալու այդ առողջութեան եւ ամրութեան: Եկեղեցին եւս իր կարգին, ապրած է առաւել կամ նուազ ծաղկուն օրեր ու տարիներ: Տաք ու պաղ օրեր ու տարիներ: Ունեցած է առաւել կամ նուազ երախտարժան հայրեր: Դիմագրաւած է ներքին տագնապներ ու… տարակարծութիւններ: Բայց վճռորոշ պահուն, եկեղեցին, միացեալ ճիգերով եղած է ժողովուրդին հետ, նոյնիսկ նահատակութեան զոհասեղանին վրայ:

Ի՞նչ է պատկերը այսօր:

Ցեղասպանութեամբ ստեղծուած Սփիւռքը, մօտ հարիւր տարիներու ընթացքին, եկեղեցւոյ հովանիին տակ եւ ամէնէն դժուարին պայմաններուն մէջ շարունակեց իր աշխատանքն ու երթը: Այդ Սփիւռքը, մանաւանդ Միջին արեւելքի երկիրներուն մէջ, վտանգաւոր ու վախազդու պայմաններու տակ կը շարունակէ իր գոյապայքարը, իսկ Արեւմտեան երկիրներու համեմատաբար խաղաղ պայմաններու ցրուածութեան մէջ ճիգ մը կայ թէեւ, բայց տեղատուութիւնը ակներեւ է:

Հայրենի ժողովուրդը, որուն արգիլուեցաւ եկեղեցւոյ հովանին՝ անցնող եօթանասուն ամեակ մը շարունակ, հոգեպէս սպառազինուելու առիթը չունեցաւ, բայց կը հաւատանք, որ ամենադոյզն աշխատանքը, ճիգն ու քաջալերանքը բաւարար պիտի ըլլային մնալու իր հոգեկան արժէքներու բարձունքին:

Մեր ժողովուրդի այս վիճակը պարտաւորեցնող իրավիճակ է: Եւ առաջինը, որ պարտաւորութեան տակ կը մտնէ՝ եկեղեցին է: Եկեղեցին, որպէս հայր, որպէս մայր: Իրաւ հովիւ եւ բարի Սամարացի:

Եկեղեցին, իր չորս նուիրապետական Ս. Աթոռներով, այսօր կոչուած է մոռնալու ամէն տեսակի տարակարծութիւն եւ միացեալ ոյժով աշխատելու, որ իր հովանաւորած ժողովուրդը վերագտնէ իր դիմագիծը, իր հոգին՝ սպառազինուելու եւ պայքարելու համար երեւելի եւ աներեւոյթ թշնամիներու դէմ:

Եղիվարդ, գրականութեան համար կը սահմանէ. Գերագահութեամբ ձգտումներ այս գետնին վրայ, միայն վնասակար կրնան դառնալ եւ պատճառ ուժերու աւելորդ վատնումին, ստեղծելով ժամավաճառութիւն, հարազատ նիւթէն-մեր ժողովուրդի օգուտէն - շեղեցնելով ամէն տաղանդ եւ աշխատաւոր: Հանգանակներով, վէճերով, յաւակնութիւններով արուեստ, հոգի, յաղթանակ կարելի չէ ապահովել գրականութեան համար: Նոյնը կարելի է ըսել եկեղեցւոյ համար:

Մեր նուիրապետական Ս. Աթոռները, ըլլալով հանդերձ վարչական ինքնավար կեդրոններ, պարտաւոր են հաշուի առնել, որ ի հոգեւորս մէկ են եւ այդ մէկութեան հասկացողութեամբ պէտք է ծառայեն ժողովուրդին՝ առողջ ժողովականութեան կարգով:

Հռոմի հսկայ եկեղեցւոյ նորընտիր Պապը իր առաջին ելոյթներէն մէկուն ընթացքին կը շեշտէր, որ «կազմակերպուին եպիսկոպոսական ժողովները ներդաշնակօրէն Հռոմի եպիսկոպոսի նախամեծարութեան հետ եւ եկեղեցին աճի ժողովականութեամբ: Ժողովականութիւն իր իսկական իմաստով»:

Ժողովականութիւն՝ ազատ մտածողութեամբ ու ազատ խօսքով: Ժողովականութիւն՝ հիմնուած աստուածային սիրոյ եւ ազգային շահերու վրայ: Ժողովականութիւն, որ օրինակ հանդիսանայ աշխարհական կարգերուն եւս:

Նման ժողովական կարգ մը սեղանին վրայ պէտք է բերէ այն այժմէական ու անժամանցելի խնդիրները, որոնք կը ծառանան եկեղեցւոյ դէմ եւ սպառնալիք են: Եւ ժողովական խօսքին անմիջապէս պէտք է յաջորդէ գործը: Այսպէս.

ա. Աղանդաւորներու հեղեղ մը նշմարելի է հայրենի ժողովուրդին մօտ: Այո՛, հազարաւոր ընտանիքներ փախուստ կու տան Մայր եկեղեցիէն, մտնելու համար ծոցը այլասերող աղանդներու:

բ. Հայաստանէն ջուրի պէս հարիւր հազարաւորներու դէպի անորոշութիւն, դէպի ձուլում վա-

Շար.ը էջ 18



# ՅԱՂԹԱԿԱՆ ԹԵԼԵԹՈՆ 2013

## ԱՄԷՆԱՄԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԵԼԵԹՈՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍՈՒՄ. ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԻ ԴԱԼԱՐ ԳԻՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ ԱՐԴԻՒՆՔԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ...










*AMGA 380, AABC 384 և HIGH VISION 382 հեռուստակայաններից Կիրակի, Սեպտեմբեր 29, կէսօրից յետոյ ժամը 2-ից մինչեւ կէս գիշերի ժամը 12-ը կայացաւ 14-րդ ամէնամեայ հեռուստամարաթոնը, որը գերազանցել է մեր բոլոր սպասելիքները: Թելեթոնը կազմակերպուել է Հայաստանի ծնողազուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծննդի բարեգործական հիմնադրամի կողմից: Ծրագրի հեղինակը «Քաջ Նազար» երգիծաթերթի և համանուն հեռուստաժամի տնօրէն՝ Յովհաննէս Բալայեանն է:*

*Թելեթօնի ընթացքում, մօտ 170,000 տոլարի խոստում է ստացուել:*

*Թելեթոնին մասնակցել են Լոս Անճելոսի ոստիկանապետ Լի Պական, Կլենտէյլի քաղաքապետարանի անդամ Ֆրանք Քուինթերոն, կազմակերպութեանց ներկայացուցիչներ, բարերարներ, բժիշկներ, փաստաբաններ, արուեստագէտներ, գործարարներ եւ կամաւորներ:*

*Հաւաքուած գումարը հիմնականում ծախսուելու է Արարատի մարզի սահմանամերձ Դալար գիւղի «Դալար» մանկապարտէզի առաջին յարկի վերանորոգման համար: Երկրորդ յարկի վերանորոգումը իրականացուեց Սեպտեմբերի 18-ին 2013թ.: Հանդիսաւոր բացմանը ներկայ էին Արարատի մարզպետը, գիւղապետը եւ 300-ից աւելի երեխաներ, ծնողներ և հիւրեր:*

*Գիւղի մանկապարտէզի շէնքը, որը կառուցուել էր անցեալ դարի 80-ականների սկզբին, խախխուեր էր եւ հոսող ջրերը յորդում էին ներս: Հիմնադրամի նախաձեռնութեամբ սկսուել էր վերանորոգումը եւ այժմ ընթանում է վերանորոգման երկրորդ փուլը: Մանկապարտէզը դառնալու է ժամանակակից հանգրուան մօտ 400 երեխաների համար:*

*Հիմնադրամը բազմաթիւ նշանակալից գործեր է կատարել հայրենիքում, վերանորոգել Խարբերդի 3 յարկից բաղկացած մանկատունը, հիմնովին վերանորոգել է Սպիտակի Թիւ 1 դպրոցի շէնքը, աւելացուել են նոր ննջասենեակներ, կառուցուել է մարզաւանը, վերակառուցուել է սահմանամերձ Պառաւաքար գիւղի դպրոցը՝ հովանաւորութեամբ բարերար Յարութ Բրուտեանի:*

*Հայաստանի ծնողազուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծննդի բարեգործական հիմնադրամը 13 տարուայ ընթացքում 170 հազարից աւելի կարիքաւոր երեխաների համար Սուրբ Ծննդեան հանդէսներ է կազմակերպել և տօնական նուէրներ բաշխել երեխաներին:*

# ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՎԱՐՈՒՀԻ՝ ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

*Այսօր բոլորիս համակել է ուրախութիւնն ու հպարտութիւնը, քանի որ հաւաքուել ենք այստեղ ըմբոշխնելու մի պատուարժան անձնաւորութեան, վաստակաշատ մանկավարժի, մեր ոսկեղնիկ լեզուի, գրականութեան, պատմութեան բեղմնաւոր սերմնացանի, հայապահպանութեան ասպարէզում իր շօշափելի ներդրումը ունեցած անհուն մտաւորականի, բացառիկ կարողութիւններով օժտուած ռահվիրայի, ազգային հասարակական գործիչ, մեր համայնքի նահապետ մեծարգոյ Երուանդ Պապայեանի ծննդեան 100-ամեակը նշելու պատուախնդրութեան զգացումը:*



*Վահրամ Փափազեանն ասել է՝ «Մեծերին յարգելը՝ մեծերի գործ է եւ մեծերին վայել: Մեր փոքրաթիւ ժողովուրդը մեծ է եղել դրանով եւ մեծ էլ կը լինի»:*

*Այս խօսքին միշտ հարազատ է մնացել Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ, Գերաշնորհ Սրբազան Յովնան Արք. Տէրտէրեանը, որն ըստ արժանւոյն գնահատել ու արժեւորել է պատմութեան ընթացքում աստղի նման շողարձակող հայ տիպար մարդկանց շէնշող կերպարների անմահ շարքը: Եւ այսօր Գերաշնորհ Սրբազանի հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ կայանում է այս տօնախմբութիւնը՝ փառաւորելու եւ երախտիքի մեր խօսքն ասելու այդ շարքում իր ուրոյն տեղն ունեցող 100-ամեայ յոբելեարին՝ մեծն Երուանդ Պապայեանի:*

*փափազեանն ասել է՝ «Մարդու էութիւնը անմնացորդ ցոլանում է իր գործի մէջ: Գործի հաշուեկշիռը ուղիղ համեմատական է սերունդներին թողած իր աւանդին, ժառանգութեան չափին»:*

*Հարիւր տարին բաւական տեսանելի, ծանրակշիռ թիւ է մարդու կեանքի համար, մանաւանդ այնպիսի անձնաւորութեան համար, որը բեղուն է ինչպէս հողը, որը մեծ է ամէնից առաջ հոգու մեծութեամբ, գաղափարի անաղարտութեամբ, զգացումների ազնուութեամբ, իր գործի արժէքաւորութեամբ: Մարդ, որը զգում է հասարակութեան մէջ տեղի ունեցող ընկերային, մշակութային, քաղաքական ու հասարակական առաջընթացն ու փոփոխութիւնները եւ ելնելով սեփական համոզմունքներից իմացել է ազդել ընթացքին վրայ յօգուտ հասարակութեան բանիւ եւ գործիւ: Իսկական հայի մի տիպար, որն իր ողջ կեանքը ապրել եւ տառապել է հայրենի ժողովրդի բոլոր ցաւերով ու խանդավառուել նրա առաջադէմ քայլերով. մարդ, որ վերլուծական սուր մտքով, մտաւորական պաշարով ու պարկեշտութեամբ, անխարդախ հաւատքով, մարդկային վեհ յատկանիշներով իր ուրոյն տեղն ունի սփիւռքի իրականութեան մէջ, վաստակաշատ մանկավարժ, որն իր գիտակից կեանքը նուիրել է մատաղ սերնդի կրթութեանը, նրանց հաղորդել իր ողջ իմացութիւնը, հոգեւոր կարողութիւնները, դաստիարակ, որն իր անդուլ աշխատանքով եւ մեծ համբերութեամբ դարբնել է ուսանողի մէջ մարդը, կերտել նրանց ազնիւ նկարագիրը եւ ամէնից կարեւորը՝ սէր առաջացրել դէպի մայրենի լեզուն, որպէս Հայկեան նետի սարսափազդու շառաչ, որպէս Նարեկացու միշտամորմոք աղօթք, հարազատ մնալով Ստեփան Զօրեանի խօսքին. «Լեզուն մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստութիւն: Իր մայրենի լեզուն վատ իմացողը կէս մարդ է, չիմացողը՝ թշուառ, ծառից ընկած մի տերեւ, որ տարուբերւում է ամէն մի պատահական քամուց»:*

*Այսպիսով, Երուանդ Պապայեանի միջոցով բազում ուսանողներ ոչ միայն բազմազան գիտելիքների ընտիր պաշար ամբարեցին, այլեւ ստացան ազգային դաստիարակութիւն: Նա սովորեցրել է իր աշակերտներին դառնալ գիտակից՝ իրենց պատկանելիութեան, տէր իրենց ինքնութեան:*

*Երուանդ Պապայեանի կեանքը ձօն է, երգում ու պատգամ, դիւան եւ խորհուրդ, մի հզօր արեւ, որ շռայլօրէն ջերմութիւն է տուել եւ շարունակում է ջերմացնել իր շրջապատին ի սէր մեծ ճշմարտութեան:*

*Եւ այս ողջ կեանքի ճանապարհին, նրա կողքին է եղել իր կեանքի մշտական զոյակիցը՝ Տիկ. Ռօզին Պապայեանը, այն հրաշք հայուհին, որոնց համատեղ կեանքով ստեղծուեց հպարտութիւն եւ ակնածանք ներշնչող հայեցի ընտանիք, ուր յաւիտենական սէրը, յոյզն ու հաւատն է թագաւորում եւ պիտի շարունակի թագաւորել եւ որի արդիւնքում Պապայեան եւ Քարայեան ընտանիքների կողմից*

*Շար.ը էջ 18*

# Massis Weekly

Volume 33, No. 38 Saturday, October 19, 2013


## Zori Balayan Urges Putin to "Annex" Karabakh on Basis of Russo-Persian Peace Treaty

YEREVAN -- Karabakh-born writer and columnist, Zori Balayan, caused a storm in Yerevan this week when he publicized an extensive open letter to Russian President Vladimir Putin implicitly urging Moscow to lay claim to the the territory. Balayan argued that Karabakh as well as much of modern-day Azerbaijan was incorporated into the Russian Empire in the early 19th century in accordance with a Russian-Persian treaty which he said still has a legal force.

"There is no Karabakh problem, there is a Russian problem," wrote the man who played a major role in the 1988 movement for Karabakh's unification with Armenia.

In his letter to President Putin Balayan brings numerous arguments in favor of a fact that the Karabakh conflict is not Armenia's issue, but rather Russia's, hence Russia is the one to solve it by recognizing the Republic of Nagorno Karabakh like it was done in Gulistan. This year marks the 200th anniversary of the Gulistan Agreement signed in 1813, at the end of Russian-Persian war won by Russia. According to the agreement, a great number of areas went from Persia (modern day Iran) to Russia, including the Karabakh khanate.

Balayan, who has long had warm ties with President Serzh Sarkisian and his predecessor Robert Kocharian, came under fire from mostly opposition politicians, public figures and media commentators in both Armenia and Karabakh. They accused him of favoring Karabakh's incorporation into Russia more than two decades after its de facto secession from Azerbaijan.

Some of these critics also see a connection between Balayan's long letter and Sarkisian's controversial decision to join a Russian-led customs union, which they believe jeopardizes Armenia's national independence.

Ethnographer Hranush Kharatyan writes in Lragir.am that Balayan has simply been trapped.

"So here is Zori Balayan, who is 'actively' concerned with the 'future of his homeland'. Realizing that the RA authorities have irreversibly lost the future of both Armenia and Artsakh [Karabakh], for as long as they are in power, Zori Balayan, allegedly, on their behalf sent a petition to the 'Russian king' suggesting that 'Russia's borders' are restored as soon as possible. Balayan, it appears, knows something about the history of Russia that the current king of Russia doesn't, and he is rushing to remind the worthy heir of Ekaterina, Peter and Alexander I…that Armenia and Russia … are not Armenia and Russia. They are Russia," writes Kharatyan.

Balayan disputed his critics' claims that he wants Karabakh to again become part of Russia. "Where did I write that Karabakh must be part of Russia?" he said.

## MP Zaruhi Postanjian Seeks Police Protection After High-Profile Death Threat



YEREVAN -- Opposition lawmaker Zaruhi Postanjian has asked Chief of Armenian Police Vladimir Gasparian to ensure her and her family's security in the wake of death threats issued by a senior government member affiliated with the ruling party.

In an interview with Yerkir.am last Thursday Deputy Minister of Sports and Youth Affairs Khachik Asrian lashed out at Postanjian over the question about President Serzh Sarkisian's 'gambling habit' that she posed to the Armenian head of state at the Council of Europe's Parliamentary Assembly session in Strasbourg last week, calling the member of the opposition Heritage party a "vole-mouse from a Turkish garden". The member of the ruling Republican Party of Armenia (HHK) known for his nationalist stance further called for "burning Postanjian at the stake".

Earlier, the youth wing of the HHK had reportedly threatened to jeer Postanjian and pelt her with eggs and tomatoes on her return to Yerevan from Strasbourg last weekend. They were apparently discouraged from staging such an action after President Serzh Sarkisian made clear through his spokesman that he believed his young loyalists should not do such a thing.

Instead, Postanjian received a hero's welcome from her fellow party members and supporters at the Zvartnots airport last Saturday. In her remarks to the media then Postanjian said that she had been prepared even for 'egg-pelting' as she believed she had done the right thing by challenging Sarkisian on a matter that "80 percent of Armenians are concerned about".

After the statement by the senior government official, however, the oppositionist said that she was worried that Asrian or one of his loyalists could actually act upon the threat and cause harm to her or her family.

"I do not rule out that using the statement of this figure some third

Continued on page 4

## FIFA World Cup Qualifying: Italy - Armenia 2-2 , Armenia- Bulgaria 2-1



Italy twice came from behind to draw 2-2 with Armenia this evening, with Mario Balotelli grabbing his side's equaliser late in the second half.

Armenia needed a win to keep alive their slim hopes of making the play-offs, though Denmark's defeat of Malta was to make that academic, and did everything they could to secure victory against Cesare Prandelli's men

The visitors took the lead early on after Alberto Aquilani needlessly gave away possession, which allowed Yura Movsisyan to steal in and rifle the ball past the Italian goalkeeper.

Italy hit back in the 27th minute through Alessandro Florenzi, who headed home Lorenzo Insigne's cross from close range after Daniel Osvaldo

Continued on page 2

## Telethon 2013 to Launch Construction of Vardenis-Martakert Highway




YEREVAN -- The Hayastan All-Armenian Fund's upcoming Telethon will be dedicated to raising financial support for the construction of the Vardenis-Martakert Highway. The third project of its kind to be carried out by the fund, the Vardenis-Martakert Highway is expected to be a boon to the further socio-economic development of Artsakh and Armenia alike.

Today it would be hard to exaggerate the crucial role which the Goris-Stepanakert and North-South highways have had in the growth and improved living standards of both republics. The Goris-Stepanakert Highway, which links Artsakh to Armenia, and the North-South Highway, often described as the backbone of Artsakh, have enabled the Hayastan All-Armenian Fund to accelerate the development of infrastructure (including water and gas pipelines and networks) as well as the construction or renovation of schools, clinics, hospitals, and cultural institutions throughout the cities and villages of Artsakh.

The Vardenis-Martakert Highway

Continued on page 4

# Armenian Oppositionist Freed in General Amnesty

YEREVAN -- An appeals court in Yerevan has ordered the release of prominent opposition youth activist Tigran Arakelian, an activist from the opposition Armenian National Congress party, more than two years after being arrested on charges which he and his supporters consider politically motivated.

The court ruled on October 14 that some parts of the charges against Arakelian must be dropped and his six-year prison sentence reduced to three years.

The court also ruled that Arakelian must be freed under the national amnesty announced recently by the government to mark the 22nd anniversary of Armenia's independence.

The partial acquittal made Arakelian eligible for a general amnesty that was declared by the Armenian authorities earlier this month. The amnesty was also applied to Artak Karapetian, one of three other HAK activists who clashed, together with Arakelian, with police officers in downtown Yerevan in August 2011 under disputed circumstances.

Arakelian's lawyers said after the ruling that they will appeal the decision -- demanding Arakelian's full exoneration.

Arakelian was arrested in August 2011 and later sentenced on charges of assaulting police. He insists the case against him is politically motivated.

"They caught me illegally and they freed me illegally," he told journalists after receiving a hero's welcome from scores of supporters that again packed the courtroom. He said he should have been acquitted altogether.

# Legal Action Planned Against Armenian Entry Into Russian Bloc



YEREVAN -- Civil rights campaigners critical of the Armenian government said on Monday that they are planning to challenge in court President Serzh Sarkisian's controversial decision to join a Russian-led customs union.

They claimed that the decision is unconstitutional because it was made secretly and violates Armenia's national independence and sovereignty.

One of the activists, Artur Sakunts, said the lawsuit to be filed with the Administrative Court will emphasize that Sarkisian did not consult the public or even the parliament before unexpectedly announcing on September 3 what was a serious change in Armenian foreign policy. Sakunts said this breached the principle of government accountability and transparency enshrined in the Armenian constitution.

"Also, membership in the customs union contradicts Article 1 of Armenia's constitution," Sakunts told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). The outspoken activist, who leads a human rights group based in the northern city of Vanadzor, pointed to the supranational powers of the union's governing body, the Moscow-based Eurasian Economic Commission. "Russia can impose any decision on any member state at any moment," he claimed.

"The customs union is an equivalent of the Soviet Union. It's a forced union," said Artak Zeynalian, another civic activist planning the legal action.

The Armenian authorities are certain to shrug off the initiative. They have repeatedly insisted that joining the customs union will not compromise the country's sovereignty. Officials in Yerevan have also said that the National Assembly will have a chance to debate the Armenian membership at a later stage in the accession process.

# FIFA World Cup Qualifying

**Continued from page 1**

robbed possession high up the pitch.

However, following the break, Armenia put themselves back in front thanks to great work from Henrikh Mkhitaryan whose flick hit the bar and bounced over the line.

Substitute Balotelli collected Andrea Pirlo's ball to smash home in 77th minute and earn Italy a draw.

On Friday October 11, Armenia won a dramatic 2-1 victory over nine-man Bulgaria in Yerevan.

The hosts took the lead just before half-time, Aras Ozbiliz despatching a free-kick into the top corner after Bulgaria defender Nikolay Bodurov had been sent off for a foul on him.

Ivelin Popov got Bulgaria back on level terms with a free-kick of his own just after the hour, but the visitors' cause was hindered by the dismissal of midfielder Svetoslav Dyakov moments later and Yura Movsisyan pressed home Armenia's numerical advantage by netting an 87th-minute winner.

In Group B, Italy have already booked their spot at Brazil 2014, with 22 points, Denmark has 16 points, Czech Republic – 15, Bulgaria – 13, Armenia – 13 and Malta – 3.

**www.massisweekly.com**
**updated every Friday**

# Turkish Journalist Reveals his Mother was Armenian




ISTANBUL -- The head of a journalists' association in Turkey, has revealed that his mother was an Armenian, who was left "in front of an Alevi family's door" by Armenians during the 1915 incidents in his recently published book, adding that his relatives had reacted strongly to this revelation, the Hurriyet Daily News reports.

Ahmet Abakay, a journalist and the head of the Contemporary Journalists' Association, told his mother Hosana's story in his book entitled "Hosana's last words," in which he said that he was told by his mother that she was an Armenian only weeks before she died.

Abakay said his mother Hosana told him her story, which she kept secret for her entire 82-year-long life, with one condition; that he should not tell it to anyone as long as she was alive."My mother told me about her story 13 years ago and soon after, she died. I could write this only 10 years later, because I hesitated. I hardly wrote it, bursting into tears when writing all of the chapters and I was stuck. I did not imagine that it could get that sentimental for me to write it. My mother was left at some people's door like an innocent kitten and that idea filled me with grief," Abakay told the Hürriyet Daily News, adding that his mother was one of the Armenian babies left to the Turkish families, with fears for their lives due to the sadden-ing 1915 incidents.

"My mother made me promise not to tell her story to my wife, daughter or her sisters, as long as she was alive. I told this issue to my inner circle after I lost my mother, to learn whether there are other secrets that we are not told. But my sister told me not to reveal this on the grounds that I am a journalist and she recalled what happened to Hrant Dink [Armenian-Turkish journalist murdered by a gunman in broad daylight in 2007 in Istanbul]. A majority of my relatives could not accept their [new] identity," Abakay said. Some relatives denied the story, while others claimed that his mother was too old to be aware of what she was saying. Abakay said he received fierce reactions from some of his family members over his revelation in his book.

"My uncle's children told me 'how dare you call our aunt Armenian and insult our family's honor. You will remove the Armenian part from your book, otherwise we will pull it off the shelves,'" said Abakay.

Abakay said his mother used to talk about one of her sisters left with Armenians in the past, but she had never talked about it in detail. Later on he learnt that she was from the south-eastern province of Erzurum's Askale district. "I want to research my identity but I doubt whether I can go any further. Now, I am content that I have received my identity back."

# Further Proof Emerges of the Armenian Genocide




The Turks are preparing to smother the 100th anniversary of their Genocide against the Christian Armenians of the Ottoman Empire in 1915 with commemorations of their victory over the Allies at Canakkale (Gallipoli) the same year. But each month brings yet further proof – in the testimony of Westerners – of what Turkey still officially denies: that the genocide of the Armenians was a fact of history, Robert Fisk writes in The Independent.

Now come the memoirs of Alec Glen, a British army doctor of the 1914-18 war – written privately for his sons, but published by his family – which record the further agony of the Armenians.

Entitled In the Front Line: A Doctor in War and Peace, Dr Glen's account includes the fate of the Armenians of Caucasia as the Turks tried to spread their pan-Turkic rule to the east in 1918 – after the original massacre of one-and-a-half million Armenians three years earlier. Marching through north-western Iran towards Baku, Dr Glen writes of how his British-Indian force began to pass several thousand Armenian refugees in a day.

"It was an amazing and tragic sight … now and then we passed at a roadside a dying person, or one already dead and half-eaten by dogs and jackals… we lifted some of the younger ones who might recover on to the mules and carried them forward to the next village.

"Salisbury Craig [a fellow British doctor] told me later that he attended an old refugee in the road who, before he died, gave him a leather belt full of sovereigns, which he asked him to spend to help the refugees.

# Academic Conference Dedicated to the 1650th Anniversary of Mesrob Mashtots

GLENDALE -- A new world order is in the making and history dictates that those nations, who do not rise to the challenge, will be sidelined from the world stage.

The spread of Christianity in the 4th century led to the establishment of a new world order. The Armenian nation rose to the challenge, thanks to Gregory the Illuminator and specially Mesrob Mashtots. The invention of the Armenian alphabet reshaped our national identity and contributed to the creation of our Golden Age.

The invention of printing and the Renaissance in the 15th century and onward reshaped the world once again. The Armenian nation was able to keep pace, thanks to Mekhitar of Sebastia. His movement became the catalyst for the reawakening and rediscovering of the Armenian Identity.

For the past several decades, the internet has been revolutionizing our lives and changing the world. Globalization is threatening the sovereignty of small nations. Can the Armenian nation rise to the challenge once again? What role will our past play in shaping our future?

To explore the above mentioned issues, an academic conference will be held at the Fletcher Jones Auditorium of Woodbury University, 7500 N. Glenoaks Blvd. Burbank , CA 91504 on Saturday, October 26, 2013 from 9 am to 5 pm.

The conference is jointly organized by the Armenian General Benevolent Union, Ararat Eskijian Museum, Hamazkayin Armenian Educational and Cultural Society, Nor Serount Cultural Association and the Organization of Istanbul Armenians.

The organizing committee is honored that the following distinguished academics have accepted its invitation and agreed to take part in the conference.

The program will consist of the following presentations:

Prof. Father Levon Zekyian -The




Symbolism of Mesrob Mashtots: A Retrospect into the Past Sixteen Centuries

Prof. Abraham Terian - The Sturcture and Purpose of Koriwn's "Life of Mashtots"

Dr. Srbuhi Hayrapetian - The Conceptualization and Rooting of National Identity

Rev. Dr. Abel Manoukian - The Plan to Create a Spiritual Statehood and Preserve National Identity in the 5th Century and Today

Dr. Yervant Zorian - The Mission of the Armenian Virtual College and its Contribution to Preserving Armenian Identity

Prof. Hagop Gulludjian - Place, Role, and Prospects of Language Facing Globalization

Prof. Robert Hewsen - Mesrob Mashtots and Mekhitar of Sebastia: the Second and Third Illuminators of the Armenian People

We are glad to inform that the conference will be live streamed in its entirety. You can follow the program by visiting NorSerount.com.

Admission is free, but seating is limited. Seats could be reserved by contacting 818.357.1606 or maggiegoschin@gmail,com or Nor Serount on Facebook.

# Taner Akçam's Receives MESA's Albert Hourani Book Award



NEW ORLEANS -- The Middle East Studies Association (MESA) has recognized Taner Akçam's book titled "The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire" the best book of 2013.

During the award ceremony MESA commission announced: "This is the strongest historical thesis dedicated to the Armenian Genocide ever and this is a very influential scientific work."

The Middle East Studies Association is a private, non-profit, non-political learned society that brings together scholars, educators and those interested in the study of the region from all over the world.

As part of its goal to advance learning, facilitate communication and promote cooperation, MESA sponsors an annual meeting that is a leading international forum for scholarship, intellectual exchange and pedagogical innovation. It is responsible for the International Journal of Middle East Studies.

Taner Akçam was born in Ardahan, Turkey, October 23, 1953. He is a German historian and sociologist. He is one of the first Turkish academics to acknowledge and openly discuss the Armenian Genocide, and is recognized as a "leading international authority" on the subject.

In August 1988 Akçam began work as a research scientist at the Hamburg Foundation for the Advancement of Research and Culture. He received his PhD from the University of Hanover with a dissertation titled, Turkish Nationalism and the Armenian Genocide: On the Background of the Military Tribunals in Istanbul between 1919 and 1922. Akçam is a former student of fellow genocide scholar, Vahakn Dadrian. In 1997, a Dutch documentary titled "Een Muur van Stilte" (A Wall of Silence), written and directed by Dorothée Forma of the Humanist Broadcasting Foundation (Dutch: Humanistische Omroep Stichting), was made about their "academic relationship."

Akçam was Visiting Associate Professor of History at the University of Minnesota, United States before joining Clark University's Strassler Family Center for Holocaust and Genocide Studies.

# Vahan Zanoyan Highlights Important Human Rights Issue in New Book

**By Taleen Babayan**

When energy consultant Vahan Zanoyan traveled to Dubai for work, he couldn't shake off a conversation he had with a young woman from Armenia, who told her how she had arrived in the city: as a victim of sex trafficking.

That encounter and the chilling story he heard prompted him to take action through literature. The author of the newly published crime novel, "A Place Far Away," Zanoyan underscores the sinister motives of human traffickers and their helpless victims, many of whom are from the former Soviet bloc.

One of the many perils the newly independent republic of Armenia faced after 80 years of Soviet rule, was the rise of corruption and power-hungry oligarchs who had free reign on Armenian soil. According to Zanoyan, they have had a hand in taking young Armenian women and selling them into the sex trade.

The Southern California-based Zanoyan, who's currently on a book tour through the U.S. and Canada to discuss "A Place Far Away," visited the Upper Saddle River Library in Upper Saddle River, NJ on Tuesday evening, September 24, where a sizeable group of people had gathered to hear him talk about his motivations for writing the book and the challenges he faced during the process.

The fiction story focuses on Lara, a 16-year-old girl from a poor village in Armenia who is forced into prostitution after a corrupt oligarch murders her father. Soon after, Lara finds herself in Moscow and then Dubai as part of a human trafficking ring. Along with the help of a Swiss investigative journalist, she fights to free herself and to be reunited with her family in Armenia.

While discussing the plight of sex trafficking in Armenia, Zanoyan stressed the importance of prevention and cited two organizations in particular that help in this realm, including ORRAN, an Armenia-based NGO that helps at-risk children and elderly, and






the United Methodist Committee on Relief, (UMCOR), whose mission is to alleviate human suffering around the world.

These organizations help vulnerable people in Armenia who are struggling so they do not seek assistance from those who will exploit them. Zanoyan noted that the girls who are forced into prostitution believe the deceptive men who approach them with fraudulent promises of turning them into a famous actress or model.

Touched by personal stories he heard from innocent young women whose lives took an unimaginable turn, Zanoyan stressed he wrote this book to shed light on an important issue that needs to be discussed and brought into the public eye.

Following a stirring reading from "A Place Far Away," Zanoyan took questions from the audience and signed copies of his book.

"A Place Far Away" can be purchased in both print and electronic versions at www.amazon.com. All proceeds will go to ORRAN and UMCOR.

## New Publication Presents British Media Reports on the Armenian Genocide

A two-volume book entitled "The Times of the Armenian Genocide: Reports in the British Press, 1914-1923" by Katia Minas Peltekian has been released.

The two-volumes compile over one thousand items collected from British newspapers between 1914 and 1923. Through articles, reports, editorials, correspondence, letters to the editor, announcements, as well as the proceedings of the British parliament, the reader will be exposed to the extent of the official and unofficial British interest in the Armenian people and in the on-going massacres in the Armenian provinces in what is now called east Turkey& Cilicia. History unfolds itself on the pages of British newspapers.

Simple, yet agonizing, the one thousand and some articles in these volumes tell the story of a persecuted people whom the Ottoman government massacred and deported in a systematic way to wipe out the Armenian nation. These reports not only tell the story of a genocide, but alsogive details of the peace negotiations at Sevres & Lausanne, and how the Armenian Question was finally swept under the rug when the West regarded its interests to be more important than granting the persecuted people their basic human rights.

The events are unfolded to the reader who is transported to those times, re-living the events on an almost daily basis.

Katia Peltekianis an independent researcher who collects newspaper articles. She has degrees in English Literature and Education from the American University of Beirut (AUB, Lebanon) and Dalhousie University (Canada). She taught English at AUB




(1988-2005) and Haigazian University (2005-2012). As a hobby, she compiles daily news items for the Armenian News Network www.Groong.org and translates to English many articles about Armenia and Armenians that appear in the Arab press.

Her love of reading newspapers led to the publication of her first book in 2000, "Heralding of the Armenian Genocide: Reports in 'The Halifax Herald' (1894-1922)", which compiles one Canadian newspaper's articles and reports on the on-going massacres and deportations of the Armenian population. At the time, the book was distributed free to Canadian members of parliament, a few officials and public libraries, in addition to university libraries around the world and Genocide research centers. Currently, she is preparing another book that compiles the thousands of articles about Armenians,printed in the British press between 1875 and 1913.

## Armenian Bar Association to Honor Justice Chuck Poochigian in Fresno

Fresno was the beginning of the new world for the early generations of Armenians who came to the United States. The Central Valley continues to bear its bountiful fruit and produce the best examples of Armenian-American contributions to the rich fabric of America. One such outstanding example is California Court of Appeal Justice Charles "Chuck" Poochigian.

The Armenian Bar Association will be returning to its roots on October 26, 2013, for the very special occasion of honoring Justice Poochigian for his service to the legal profession, his appointment to the appellate bench, and his contributions to the Armenian-American community. The "gnkahayr" or godfather of the tribute dinner and program will be California Supreme Court Justice Marvin Baxter. Justice Baxter and Justice Poochigian are both original and now honorary members of the Armenian Bar Association and remain very active in its conferences, programs, and workshops.

Many of Fresno's pioneering Armenian families, including the Poochigians and the Baxters, found their first scratches of earth and handfuls of destiny in the vineyard acres and fruit orchards reminiscent of their ancestral homesteads in Kharpert, Van, Bitlis, and Erzeroum. Like so many others of that resolute first generation—oftentimes with heroic grandmothers leading the way—they turned the unremarkable into the unmistakable.

Unmistakable pride, unmistakable humility, unmistakable industry, and unmistakable charity. The legacy of service and commitment left by them to us is what propelled the founding of the Armenian Bar Association nearly 25 years ago by a native son of Tule fog and Fresno figs, Raffi K. Hovannisian. Today, the Armenian Bar Association is an organization of hundreds of judges, lawyers, and law students, united as much by their common heritage as they are by their shared profession.

The Armenian community is encouraged to attend the Judges' Night Reception and Dinner which will be held at the Holy Trinity Armenian Church Hall on Saturday, October 26th, with the reception beginning at 6:30 p.m. and dinner at 7:30 p.m. Tickets are $50 per person, $25 for students. For further information and reservations, please contact Sevag at (559) 824-0955 or Armen at (818) 645-2811.

## AGBU Western District Committee Annual Gala



PASADENA -- As the date approaches, excitement continues to rise in anticipation of this year's Annual Gala, presented by the AGBU Western District Committee. The elegant event is scheduled to take place Saturday, November 16th at the Beverly Hilton, in Beverly Hills, CA. Organized by the AGBU Special Events Committee under the leadership of AGBU advocate, Mrs. Hermine Janoyan, the care and enthusiasm of all members involved in the planning process make the annual event yet another projected success.

A prudent selection of highly esteemed artists will provide entertainment for the night. Internationally recognized Armenian pop star and honored graduate of Yerevan Komitas State Conservatory, as well as Emma Tsaturyan's Vocal Centre, Ani Christy's talent can be experienced live with her performances at this year's Gala. Her skills will be complemented with performances by Harut Hakopyan, better known as Mister X and DJ Therapist.

Amongst excellent musical performances, and a lively social environment, this year's gala will highlight the profound accomplishments of the AGBU Western District Committee, which oversees all AGBU chapters in the western part of the United States.

All donations and proceeds will be benefit the Armenian youth, as the main focus of the committee is to develop the programs and opportunities offered to the new and blossoming generation of the Armenian community.

This year's Gala will focus on the highlights and accomplishments of the AGBU Western District Committee which oversees all AGBU chapters in the western part of the United States. "Our focus has always been our youth. Now more than ever, in line with the AGBU Central Board guiding principles, our efforts are being devoted to creating, developing and securing local programs to benefit the next generation of Armenian Americans, stated Krekor Karageuzian, Chair of the AGBU WDC. "The Gala will underline the many accomplishments of our chapters and special programs while helping to empower all future endeavors" Karageuzian continued. For details and additional information please contact the AGBU WDC offices at (626) 794 7942.

## Zaruhi Postanjian Seeks Police Protection

**Continued from page 1**

party may try to attack me or members of my family," the mother of four wrote in her request to the police.

Asrian, meanwhile, made a clarifying statement on Friday, saying that his call for burning Postanjian at the stake was just a figure of speech.

"I did not mean burning Zaruhi Postanjian's physical body, I meant it for her actions, for this phenomenon," Asrian suggested.

Leading human rights activists in Armenia, however, did not appear to be satisfied with this explanation. One of them, former ombudswoman Larisa Alaverdian, stressed that no one, especially a high-ranking state official, has the right to make such threats. She said that under Armenian laws such statements can easily be qualified as a crime.

## Construction of Vardenis-Martakert Highway

**Continued from page 1**

likewise will be of key economic and humanitarian importance. By functioning as a direct road link, the highway will become a second lifeline between northern Armenia and northern Artsakh, significantly cutting down travel times, boosting the economies of scores of Artsakh communities along its path, stimulating inter-community ties, and vastly improving geographic access for implementing local development initiatives. Currently the only land-travel link between Artsakh and Armenia is the Berdzor community, through which passes the Goris-Stepanakert Highway.

The highway's construction will include, in addition to paving and the painting of pavement markings, the installation of water-removal and snow-drift-control systems as well as protective barriers and road signs. Design tweaks and special safety measures will be applied in highway sections prone to landslides. These measures will comprise the construction of support walls and rockfall-attenuation structures, and the removal of rocks. In addition, the project entails the renovation or refitting of 16 bridges along the route.

## ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ «ՄԵԾԱՐԵՆՑԸ ԲԺՇԿԻ ԱՉՔՈՎ»

*9 Հոկտեմբեր 2013, Չորեքշաբթի օր, Տոքթ. Ռաֆֆի Պալեան բժշկական-գրական դասախօսութիւն մը տուաւ ՀԲԸ Միութեան Փասատինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական վարժարանին մէջ:*



Միսաք Մեծարենցին նուիրուած աշխատանքներուն որպէս եզրափակիչ ձեռնարկ, 9 Հոկտեմբեր 2013, Չորեքշաբթի օր, Տոքթ. Ռաֆֆի Պալեան ՀԲԸ Միութեան Փասատինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանի իններորդ դասարանի յառաջադէմ խումբին տուաւ «Մեծարենցը Բժշկի Աչքով» խորագրով դասախօսութիւն մը, որուն նպատակն էր աշակերտներուն թոքախտի մասին հիմնական գիտելիքներ փոխանցել եւ բժշկականօրէն բացատրել բանաստեղծին ներաշխարհը:

Տոքթ. Պալեան նախ տուաւ թոքախտին պատմականը, բացատրելով, թէ Մեծարենցի ապրած դարաշրջանին այս հիւանդութիւնը ինչո՛ւ եւ ինչքա՜ն տարածուած ու քանդիչ հիւանդութիւն մըն էր: Ապա ան աշակերտներուն ներկայացուց թոքախտին պատճառ եղող մանրէն, անոր կենդանութիւն տուող յարմարաւէտ միջավայրերը, հիւանդութեան ախտանշաններն ու զարգացման շրջանները, ինչպէս նաեւ՝ այսօր թոքախտին դէմ գործածուող մանրէասպան դեղերուն անուններն ու տեսակները:

Դասախօսութեան երկրորդ կէսին հիւր դասախօսը ծանրացաւ թոքախտ-հայ գրականութիւն յարաբերութեան վրայ: Ան բացատրեց, թէ տխրահռչակ այս հիւանդութիւնը ինչպէս մեր բանաստեղծներուն կրնար ներշնչման աղբիւր ըլլալ:

Վերջաւորութեան Արի Էքմէքճեան իր դասընկերներուն անունով դասախօսին տուաւ բոլորին կողմէ ստորագրուած շնորհակալական բացիկ մը, իսկ Մելինտա Ալգալան նուիրեց փոքրիկ գանձանակ մը՝ «Մեծարենցի Գանձանակը», որուն մէջ աշակերտները դրած էին բանաստեղծութիւններուն մէջ յիշուած բոլոր գոյներէն եւ բոյրերէն նմոյշներ, ինչպէս՝ խունկ, սաթ, մագտաքէ եւ վարդ: Իսկ գիւմրիւթի, թարշիշի եւ մեղեսիկի փոխարէն աշակերտները բերած էին գունաւոր կիսաթափանցիկ ապակիներ: Չմոռնալով, թէ երիտասարդ բանաստեղծը կը սիրէր ծովուն ձայնը եւ Կիրակնամուտքի ժամերգութեան շարականները, աշակերտները գանձանակին մէջ դրած էին նաեւ խեցի մը եւ «Եկեալքս» շարականին խօսքերը:

Դասախօսութիւնը վերջ գտաւ «Սիրերգ» բանաստեղծութեան խմբային արտասանութեամբ:

Աւանդական դարձած այս ամէնամեայ աշխատանքը կարելի կը դարձնէ, որ աշակերտները կարենան աւելի խորաթափանց վերլուծել Մեծարենցի բանաստեղծութիւնը եւ գրական պատկերները:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ 20ԻՆ ՊԻՏԻ ՆՇՈՒԻ ՌՈՏ ԱՅԼԸՆՏԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻԻ 100-ԱՄԵԱԿԸ



Ռոտ Այլընտի Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պիտի նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը: Հոկտեմբերի 20ին կայանալիք սոյն միջոցառումին պիտի մասնակցի նաեւ «Շուշի» պարային համոյթը: Ռոտ Այլընտի եւ ԱՄՆ-ի ամենահին եկեղեցիներէն մին նկատուող այս եկեղեցին ունի 450 հոգինոց խորհուրդ եւ մօտաւորապէս 4000 անդամ, որոնց մէջ կան հայեր ոչ միայն Հայաստանէն, այլեւ Սուրիայէն, Լիբանանէն, Թուրքիայէն, Եգիպտոսէն, Գանատայէն, Պաքուէն եւ Ռուսաստանէն: Հանդիսութեանց պիտի նախագահէ ԱՄՆ-ի Արեւելեան Թեմի առաջնորդ Գերշ. Խաժակ Արք. Պարսամեանը:



# ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՈՎ ՈԳԵԿՈՉԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՔՍԱՆ ԱՆՄԱՀ ՌԱՀՎԻՐԱՆՆԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 98-ՐԴ ՅԻՇԱՏԱԿԸ





Կիրակի 8 Սեպտեմբեր 2013-ին յաւարտ սուրբ պատարագի արարողութեան, հոգեհանգստի պաշտօն կատարուեցաւ քսան անմահներու հոգիներուն համար Սբ. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուր պատարագիչ քահանան իր բովանդակալից ու հակիրճ խօսքերով ներկայացուց քսաններու գործունէութիւնը:

Հովանաւորութեամբ Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Շահան Եպս. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Ս.Դ.Հ.Կ.-ի Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան Վարչութեան, Կիրակի, 8 Սեպտեմբեր 2013-ին երեկոյեան ժամը 5:00-ին, Հալէպի «Գէորգ Եսայեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հնչակեան Քսան Անմահ Կախաղաններու Նահատակութեան 98-րդ տարեդարձի ոգեկոչումը ներկայութեամբ Վերապատուելի Յարութիւն Սէլիմեանի Համայնքապետ Սուրիոյ Հայ Աւետարանական եկեղեցւոյ, Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր Հիւպատոս Տիար Կարէն Գրիգորեանի, հայ աւանդական կուսակցութիւններու, Ազգային Իշխանութեան ներկայացուցիչներու, Ս.Դ.Հ.Կ.-ի Սուրիոյ Հիւսիսային Շրջանի Վարիչ Մարմնի անդամներու, Հալէպահայ մշակութային, մարզական, բարեսիրական, ուսանողական եւ երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներու եւ ընտրանի հոծ բազմութեան:

Ձեռնարկը սկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով, կատարողութեամբ Համազգայինի «Զուարթնոց» երգչախումբին ղեկավարութեամբ Պրն. Յարութիւն Ալապուլանեան, դաշնամուրի մօտ Օրդ. Ռուզանա Պարսումեան:

Նախքան իր բացման խօսքը Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան վարչութեան անդամ ընկ. Քրիստ Պչտիկեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու քսան կախաղաններու եւ Սուրիոյ հայ անմեղ նահատակներու յիշատակը:

Յարգելի ընկերը իր բացման խօսքին մէջ հակիրճ ակնարկով մը անդրադարձաւ Քսան Անմահներու սխրագործութիւններուն, որոնք Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ աւետեցին ազատ, անկախ եւ ինքնավար Հայաստանի կերտումը: Իր խօսքի աւարտին Պչտիկեան վերահաստատեց ներկաներուն շարունակելու քսաններու անշեղ ուղին:

Մեծ ապրումով՝ յուզիչ եւ ազդեցիկ ոճով ընկերուհի Ջանի Նազարեան ասմունքեց Սիամանթոյի՝ «Դարերու Վրէժը», խլելով ներկաներուն ծափողջոյնները:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին քսաններու նուիրուած միջոցառումները, որ տեղի ունեցած էին Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ 13-15 Յունիս 2013-ին, կազմակերպութեամբ՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի, մասնակցութեամբ Պոլսոյ հայ կազմակերպութիւններու եւ Թուրքիոյ կարգ մը մտաւորականներու: Սոյն վաւերագրական ժապաւէնը տպաւորեց ներկաները եւ հոգիներուն մէջ արթնցուց հայու ունեցած դարաւոր պայքարը մեր դատին համար մինչեւ յաղթանակ:

Նշենք որ Պապ Ալիի եւ Գում Գաբուի ցոյցերէն 120 տարի ետք



հնչակեաններու ղեկավարութեամբ դարձեալ տեղի ունեցաւ հայկական երրորդ ցոյցը Պոլսոյ հրապարակէն մինչեւ Թաքսիմ:

Ն.Ս.Մ.Մ.-ի պարախումբի պարմանուհիները ներկայացուցին նազ պար մը, ուր կրկին անգամ հաստատեցին հայ կնոջ նազանքն ու կամքին ուժը, յաղթահարելու ամէն դժուարութիւն:

Տխրունիական Նազօ Նազարեան կիթառի վրայ նուագեց Քսան Անմահներուն նուիրուած եղանակ մը, ներկաները առաջնորդելով դէպի Պայազիտ հրապարակը:

Նուագին յաջորդեց մեներգ կատարողութեամբ հալէպահայ սիրուած երգիչ Պրն. Մհեր Մինասեանի: Ան իր աշուղական ձայնով եւ

Շար.ը էջ 18

# «ՔՍԱՆՆԵՐՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ» ՍԻՏՆԻԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ շրջանի վարիչ մարմնին, Շաբաթ 5 Հոկտեմբեր 2013-ի երեկոյեան տեղի ունեցաւ «Քսաններու Հետքերով» հանդիսութիւն, ներկայացնելու եւ քննարկելու համար Քսան կախաղաններու նահատակութեան 98-րդ ամեակին նուիրուած եւ Պոլսոյ մէջ կազմակերպուած ձեռնարկներուն մանրամասնութիւնները: Սոյն հանդիսութիւնը շարունակութիւն էր նոյն խորագրին տակ Պէյրութի մէջ կազմակերպուած ձեռնարկին:

Սիտնիի Frenches Forest թաղամասի «Արարատ» մշակութային կեդրոնի սրահին մէջ կազմակերպուած հանդիսութեան բացումին, ՍԴՀԿ Աւստրալիոյ շրջանի վարիչ մարմնի ընկերները նախ ներկայացուցին Պոլսոյ մէջ կազմակերպուած ձեռնարկներուն կարեւորութիւնը եւ գլխաւոր նպատակը: Ապա, «Արարատ» օրաթերթի քաղաքական լուրերու պատասխանատու Շիրազ Ճէրէճեան սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուց Թուրքիոյ մէջ տեղի ունեցած երեք հաւաքներուն մասին պատմող լուսանկարային եւ տեսագրական տեղեկութիւններ, պատմելով ձեռնարկներու նախապատրաստական գլխաւոր հանգրուաններուն, Պոլիս ուղեւորութեան, ձեռնարկներու ընթացքին, արտասանուած խօսքերուն, պոլսահայ հաստատութիւններուն տրուած այցելութիւններուն մասին: Յատուկ անդրադարձ եղաւ նաեւ օրին՝ Պոլսոյ մէջ տեղի ունեցած ցոյցերուն, Քսաններու ձեռնարկներուն պոլսահայերու մասնակցութեան, հաւաքները կազմակերպած Թուրք ձախակողմեան մտաւորականներու եւ գործիչներու գաղափարներուն, ոչ հայերու անդրադարձին: Մանրամասն զեկոյց ներկայացուեցաւ Պոլսոյ հայկական գերեզմանատուներ կատարուած այցելութիւններուն եւ այնտեղ կուտակուած տեղեկութիւններուն մասին, նաեւ անդրադարձ եղաւ Պոլսոյ հայկական հարուստ ժառանգութեան:

Հանդիսութեան աւարտին, ներկաները հնարաւորութիւն ունեցան փոխանցելու իրենց հարցումները եւ ստանալու յաւելեալ տեղեկութիւններ՝ Պոլսոյ մէջ կազմակերպուած այդ պատմական ու աննախադէպ երեք ձեռնարկներուն մասին:






# ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴԷՊՔԵՐ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

*Մենք շատ ենք լսել կենդանիների հաւատարմութեան մասին: Ինչ դէպքեր, ինչ պատմութիւններ եւ ինչ սխրագործութիւններ ասես, որ չի պատահել մի քանի տեսակ կենդանիների, նաեւ որոշ թռչունների կողմից իրենց սնող, խնամող եւ վարժեցնող տիրոջ նկատմամբ: Տիրոջ ստացուածքը պահելու եւ պաշտպանելու զոհաբերութեան շատ դէպքեր են պատահել անասուն կենդանու կողմից, դրանով հանդերձ որ մտածելու կարողականութիւնից զուրկ եւ համր (չխօսող) են: Նրանք մարդի ցուցաբերած գուրգուրանքն ու փայփայանքը հասկանում են, զգում են եւ մարմնի շարժուձեւերով եւ ձայնի ելեւէջներով արտայայտում են իրենց ներքին զգացումները:*

*Ինչպէս գիտենք վայրի կամ յօշոտող կենդանիները բնազդով են կեանք ապրում, իրենց սոված ժամանակ ոչինչ չեն հասկանում եւ ոչ մի բանի դէմ չեն կանգնում ու չեն խնայում, պատահած որսին բռնում եւ իրենց քաղցը յագեցնում են, երբ կշտանում են, դառնում են բաւարարուած ու գոհացած, նոյնիսկ իրենց որսի մնացածը թողնում են ուրիշների համար, էլ ոչ մի որսի մասին չեն մտածում, նոյնիսկ փափկամսիկ էրէ էլ իրենց մօտից անցնի գործ չեն ունենում հետը, բայց մեր կեանքում երբեմն հանդիպում ենք այնպիսի մարդ - արարածի, որ ամէն ինչով տարբերւում է կենդանուց, սակայն յափշտակելու եւ դիզելու մարմաջից ձգտում է շարունակ աւելին ունենալ ի գին այլոց դժբախտութեան: Որոշները այնքան անպարտաւան ու ապերախտ են, որ ուրիշների լաւութիւնները չտեսնելու են ձեւացնում եւ անկարեւորութեամբ անցնում:*

*Ինչպէս են գոյացել այսքան տեսակ-տեսակ կենդանիներ, թռչուններ, միջատներ եւ ջրային կենդանիներ, ինչ ասենք, այն ինչ որ լսել եւ կարդացել ենք՝ բնութեան հրաշագործութիւնն է այս այլ եւ այլ հրաշալիքների կողքին:*

*Ձիերի մասին պատմութիւններ շատ կան, այս դէպքի մասին թերեւս լսած չունէք:*

*Մեր ծանօթ բարեկամ Մելիքը ապրում էր Գորգանում-Իրան, Նրա հետ ծանօթացել էի իմ Գորգան ճամբորդութեանս ընթացքում, կարճ ժամանակում նրա հետ մտերմացել էի, նա երկար տարիներ ձիապահութեամբ էր զբաղւում, մի մեծ ագարակում պաշտօնեայ էր, ձիեր էին վարժեցնում մրցութիւնների եւ վաճառքի համար, նա ձիերի խնամատար էր, ինչպէս ծնունդ տայ, ինչպէս նրանց կերակրի եւ վարժեցնի, այնպէս որ ձիանքի ծնուելուց մինչեւ մեծանալը սերտօրէն նրա պատասխանատւութեան էր յանձնուած, նա խղճմտօրէն էր կատարում այն ինչ յանձնարարուած էր իրեն: Մելիքը նիհարակազմ եւ միջակ հասակ ունէր՝ ծերութեան սեմին: Նրա գործատէրերը պարսիկ էին, երկար տարիներով նրանց համար էր աշխատում, կարելի է ասել կեանքը պարսիկների մէջ էր անցել, սակայն մաքուր հայերէն էր խօսում պահելով հայկական նկարագիրը, հէնց սրա համար էլ պարսիկ տէրերը նրան սիրում էին եւ անուանում էին՝ «Մելիք արմանի» (հայ մելիք): Նա իր ձիաբուծութեան կեանքից այս պատմութիւնն է անում՝*

*-Օրից մի օր ես շատ տխուր եւ յուզուած էի, այսպէս նեղացած իմ անցեալի եւ ներկայ կեանքից ու տարակուսած ապագայի նկատմամբ ձիանից ոչ շատ հեռու կանգնած էի, զարմանալիօրէն զամբուկ ձիանից մէկը մօտենում է ինձ, գլխով ու բերանով սկսում է լիզել ինձ, ապա ոտքերից մէկը բարձրացնելով դնում է իմ ափի մէջ եւ շարժ ու ձեւերով հասկացնում է որ նստեմ, առանց կռահելու նրա նպատակը նստում եմ, ձին էդ միջոցին պառկում է եւ գլուխը դնում է իմ գիրկը եւ գորովագութ աչքերով երկար մնում այդ վիճակում, երբ այդ վիճակը տեսնելով , հասկացայ որ ձիու այդ վարմունքը ինձ սփոփելու ու կեանքի նկատմամբ յոյս ներշնչելու մտքով էր արել: Փաղաքշանքով նրան կանգնեցնում եմ եւ մոռացած իմ անհանգստութիւնը շարունակում եմ իմ աշխատանքը:*

*Աֆղանիստանում Սովետի գրաւման տարիներում Իսլամ մոջահէդները պարտիզանական կռիւներ էին մղում Սովետի դէմ: Ռուսական մի ռազմազօրանոցում, լեռների մէջ գտնուող, նաեւ Հայաստանից զինուորներ կային: Դրանցից մէկը Ժորա անունով, որը երբեմն դուրս էր գալիս զօրանոցից հետախուզութեան նպատակով: Մի օր զօրանոցին մօտիկ ժայռերի մէջ նկատում է օձերի մանր ձագեր, կարծելով լքուած ձագեր են, նա լծւում է սրանց խնամքին առանց ձագերի ծնողներից վախենալով, ամէն անգամ հանդիպելիս ինչով որ կարողանում էր նրանց կերակրում էր: Մի օր էլ երբ ձագերին սնելիս շարժւում է դէպի զօրանոց մէկէն նրա առջեւը փայտի պէս դիք մի խոշոր օձ է կանգնում, Ժորան այս տեսարանը տեսնելով վախից կարկամած տեղում մնում է սարսափած, օձն ես ասում անցնում է գետնի վրայ եւ արագօրէն փաթթւում է Ժորային եւ այնպէս է սեղմում, որ նա տեղից չշարժուի: Ժորան անակնկալի եկած՝ ոչ մի պաշտպանողական արարք չի կարողանում ցոյց տալ եւ ենթարկւում է իր ճակատագրին, այդ քանի րոպէների ընթացքում զօրանոցը պայթում է ուժեղ բուլուլիչ բարձրացնելով, օձ եւ Ժորա փայտացած վիճակում ականատես են լինում այդ պայթումին, երբ պայթոցները դադարում են, օձը իր փաթթոցը արձակում է եւ գնում է ձագերի մօտ աչքերը յառած Ժորային, ով գիտէ որպէս երախտագիտութիւն որ ձագերին կերակրել է: Ժորան նոր է հասկանում, թէ օձը ինչպիսի մեծ ծառայութիւն է արել, կեանքը օձի շնորհիւ փրկուել էր, բայց Ժորան վախից կորցնում է իր սեւ մազերի գոյնը եւ նրանք միանգամից դառնում են սեպ - սպիտակ ինչպէս ծերունի: Այս դէպքը ինձ է պատմել իմ Հայաստանցի հարազատը հաւաստիացնելով որ ռուսական թերթը այս դէպքի մասին գրել է: Որքանով է իրական թողնում եմ ձեր դատողութեան:*

# ԻԶԱՊԷԼ ՊԱՅՐԱՔՏԱՐԵԱՆԻ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ «ԱՐՄԷՆՊՐԵՍ»-ԻՆ ՀԱՅԵՐԻՆ ՄԻԱՒՈՐՈՒՄ Է ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

*Գանատահայ օպերային երգչուհի, աշխարհահռչակ սոպրանօ, բազմաթիւ մրցոյթների դափնեկիր: Մարդ, ով ելոյթ է ունեցել աշխարհի ամենահեղինակաւոր բեմերում: Արուեստագէտ, ում տաղանդն, իսկապէս, անսպառ է եւ աներեւակայելի: Հայաստանում Իզապէլ Պայրաքտարեան երգչուհուն շատ են սիրում: Նրա ամէն մի այցը տօն է դառնում նրա արուեստը բարձր գնահատող երաժշտասէրների եւ մասնագէտների համար: «Արմէնպրես»-ի թղթակիցը զրուցել է անուանի երգչուհու հետ նրա Հայաստան այցի, Մոսկուայում Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպութիւն եկեղեցու բացման արարողութեան ժամանակ կայացած համերգի, ծրագրերի եւ մի շարք այլ հարցերի շուրջ:*

-Իզապէլ, դուք վեց տարի Հայաստանում չէք եղել: Ի՞նչ զգացողութիւններ ունէք այսօր հայրենիք ոտք դնելուց յետոյ:

*-Այո, մօտ վեց տարի Հայաստանում չեմ եղել: Շատ բան է փոխուել Երեւանում, եւ ամէն ինչ՝ դէպի դրականը: Ինձ համար այստեղ գտնուելն իսկապէս աննկարագրելի հաճոյք է: Ինչքան շատ եմ Հայաստան գալիս, այնքան շատ եմ զգում, որ պատկանում եմ իմ երկրին: Հաճելի է տեսնել Հայաստանի առաջընթացը եւ գեղեցկացումը: Տեսնում եմ, որ բնակիչները սիրում են իրենց քաղաքը, եւ այն միայն զբօսաշրջիկների համար չէ: Շատ հաճելի է դա զգալ:*

-Հնարաւո՞ր է, որ Ձեր այցի շրջանակներում հանդէս գաք համերգով:

*-Ինչպէս գիտէք, ես Սեպտեմբերի 17-ին երգեցի Մոսկուայի եկեղեցու բացման արարողութեանը: Իհարկէ, կը ցանկանայի այստեղ համերգ կազմակերպել: Բայց ես Հայաստան գալու ուրիշ պատճառ ունէի: Մշտապէս Հայաստան եմ այցելել տարբեր առիթներով, բայց երբեք այստեղ չեմ եղել Անկախութեան տօնին: Մեր պատմութիւնը եւ այս տօնն է հէնց, որ միաւորում են աշխարհի բոլոր հայերին: Մեզ այսօր միաւորում է անկախութիւնը: Ես եկել եմ ուղղակի այստեղ լինելու եւ մասնակցելու տօնական միջոցառումներին՝ որպէս հանդիսատես:*

*Զբօսաշրջիկ չեմ, որովհետեւ ես ինձ որպէս զբօսաշրջիկ չեմ զգում: Ես իմ հարազատ քաղաքում եմ, որտեղ պատկանելիութիւն եմ զգում:*

*Ես սիրում եմ Հայաստանում լինելու հանգամանքը՝ առանց համերգի պատրաստուելու սթրեսի: Հայաստան գալը մէկ րոպէում, բայց ոչ պատահականօրէն արուած որոշում էր: Իրականում, ես պէտք է գայի աւելի վաղ եւ ելոյթ ունենայի այստեղ, սակայն յղիութեանս պատճառով չկարողացայ ճամբորդել... Միայն 2004-ին չէ, որ եկել եմ Հայաստան: Դրանից*

*Շար.ը էջ 19*




HayastanInfo.net

# ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՐՍԱՆԵԱՑ ՀԱՆԴԷՍԻ ՊԱՏԱՐԱԳ

*ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Կովկասի ձիւնոտ լեռներից այն կողմի վայրենի մի ցեղ'' ալաններ, (հետագային Օսեթներ, Խորհրդային երկրի փլուզումից յետոյ իրենց նորէն Ալան են կոչել) արշաւել են հարաւի երկրներ՝ յափշտակելու նրանց արարումները: Նրանց Թագաւորի գլխաւորած զօրքը հասել է Արմինա-Հայաստանի սահմաններ, բանակել Կուր գետի ափի դաշտավայր: Պատերազմ, կռիւ պիտի լինէր: Արմինա-Հայաստանի Թագաւոր Արտաշէսը, հայոց բանակի հետեւակի ու այրուձիի զինավար գունդերը գլխաւորած անցել Կուր գետը՝ ճակատամարտ մղելու ալանների դէմ: Ալանները չգիտէին ում դէմ էին կռուի ելել, ում դէմ էին զէնք ճօճել: Արեւելքում արիական հզօր մի պետութեան արեւորդիների, հետեւակի ու այրուձիի գունդերը գրոհել էին ալանների դիրքերին, մխրճուել նրանց առաջապահ գունդերի շարասիւններ, եռոտանի նիզակներով պատռում թշնամու մարտիկների վահանները, նօսրանում էին նրանց շարքերը: Արտաշէսը, նրանց լեռների ձիւնի նման սպիտակաթոյր նազաճեմ ձին բազմած, գնում այնտեղը՝ որտեղ մարտի էր ելել արքայազնը: Արմինա-Հայաստանի Թագաւորը կալանել էր արքայազնին, ալանները տանուլ էին տուել մարտը, նրանց Թագաւորը նահանջի հրաման է տուել: Արտաշէսը կարգադրել է հայոց բանակը անցնէր Կուրի այն ափ, ինքն էլ արքայազնի վզին կապած պախուրձէն քաշելով հետեւել իր զօրաբանակին: Ալանաց Թագաւորը հաշտութիւն է խնդրում Արտաշէսից, առաջարկելով յաւերժական հաշտութիւն եւ որդու համար մեծ փրկագին: Արտաշէսը մերժում է նրա առաջարկը:*

*Ալանների գեղանի արքայադուստր Սաթենիկը, Կուրի ափին ելած, վարսերը դէմքին ու հեւացող լանջին հոսած, աղէկտուր կանչել՝*

Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշէս,
Որ յաղթեցիր ալանների քաջ ազգին,
Եկ հաւանիր ալանաց աչագեղ դստրիս խօսքը՝
Վերադարձնելու պատանուն,
Քանի որ դիւցազունները օրէնք չունեն՝ մէկ բէնի համար
Ուրիշ դիւցազունների զարմը վերացնել
Կամ, ծառայ դարձրած, ստրուկների կարգում պահել
Եւ թշնամութիւն յաւիտենական
Երկու քաջ ազգերի միջեւ հաստատել:

*Արտաշէս Թագաւորը՝ իր դայեակ Սմբատ զօրավարին խնամախօս ճամբել Ալանաց Թագաւորի բանակատեղի, նրանից խնդրելու լուսնի նման չքնաղ, արեւի նման սիրտ այրող, ակներից ժայթքած շանթերի լոյսից հոգի խոցող դստեր հարսնութեան տալու հայոց Թագաւոր Արտաշէսին, Թագուհի լինէր Արմինա-Հայաստան երկրին:*

*Ալանների Թագաւորը, իրենց աշխարհում ընդունուած կարգի համաձայն, իր դստեր հարսնութեան համար տաղանդներով ոսկի է պահանջել: Արտաշէսը, պահանջած չափի ոսկի ուղարկել է ալանների Թագաւորին: Գողթան երգիչները իրենց տաղերով երբեք չեն գովերգել գնուած սէրը: Նրանք տաղեր չէին յօրինել կորսուած հարստութեան մասին, սակայն բազում տաղեր կորսուած սիրոյ մասին: Ահա ատոր համար է, որ Սաթենիկի հարսնութիւնը գովերգել են իրենց Թագաւորի Սաթենիկին փախցնելու քաջերին վայել դրուագով: Եւ այսպէս՝*

Եւ որտեղից կը տայ քաջ Արտաշէսը
Հազար-հազարներ եւ բիւր-բիւրեր
Ալանաց կոյս օրիորդիս փոխարէն:
Հեծաւ արի արքայ Արտաշէսը սեւը գեղեցիկ
Եւ հանելով ոսկէօղ շիկափոկ պարանը,
Եւ անցնելով գետը, որպէս արծիւ արագաթեւ,
Եւ ձգելով ոսկէօղ շիկափոկ պարանը՝
Գցեց մէջքը Ալանաց օրիորդի,
Եւ շատ ցաւեցրեց մէջքը փափուկ օրիորդի,
Արագ հասցնելով բանակը իր:

*Արտաշէս Թագաւորը, քաջին վայել սխրանքով է փախցնում իր սիրած աղջկան: Երգիչի տաղում Ալանաց օրիորդի փափուկ մէջքը ցաւացնելու դրուագի յօրինումը՝ նրա նկատմամբ սիրոյ ու քնքշանքի արտայայտութեան դրսեւորումն է, ոչ թէ նրա արքայական ծագման, այլ՝ նրա արքայական գեղեցկութեան ու քնքշութեան համար: Այդպէս գեղեցիկ են գովերգել Արմէն-հայերի Թագաւորի սէրը ալանների արքայադստեր նկատմամբ: Թագաւորները հաշտւում, դաշինք կնքում:*

*Արտաշէս Թագաւորը, իր յաղթ թեւերի վրայ պահած Ալանաց օրիորդին բազմեցնում սպիտակաթոյր նժոյգի թամբին, ինքն էլ բարձրանում նժոյգին, պատուիրում նրան իր փափկասուն թեւերով պինդ գրկել իրեն, հասկացնում նրան, որ իր նժոյգը սլանում է քամու արագութեամբ, որ իրեն տանում է իր ոստան: Թագաւորի զօրական գունդը, Արտաշէսի նժոյգի հետ համընթաց, արքայական ճանապարհով սլանում դէպի Արտաշատ ոստան: Սուրհանդակները, ամբողջ երկրով պատգամ են տարել, որ Արմինա-Հայաստանի բանակը պարտութեան է մատնել ալաններին, հայոց արքան արծուային թռիչքով անցել Կուր գետի միւս ափ, շիկափոկ պարանով ալանների օրիորդին իր բանակատեղի բերել եւ որ արքայական ճանապարհով գնում Արտաշատ ոստան: Շէների, աւանների բազում-բազում մարդիկ արգելափակում էին Արտաշէսի գլխաւորած գունդի ճանապարհը: Իրենց դաշտերի ալուան ծաղիկների փունջեր նետում Թագաւորի ու Ալանաց օրիորդի գլխավերեւ, արորդի արմէն-հայ մարդ, դու էլ այնտեղ պիտի լինէիր, որ տեսնէիր հազար-հազար գոյների լոյսի հեղեղի տեղատարափը նրանց վրայ: Ժպտում էր Ալանաց օրիորդը, ծիծաղում էր օրիորդը, նայում չորս դին՝ տեսնում կանաչով պճնուած դաշտեր, արեւի ծիածանով հրդեհուած այգիներ, արեւի խինդ հայոց աշխարհում: Շէների մարդիկ, իրենց Թագաւորի ընթացքի ճանապարհներին երկար-երկար կանգուններով ծաղիկներ փռում: Շէների պարման-պարմանուհիները, կթոցներ վեր պահած, Թագաւորին ու Ալանաց օրիորդին նուիրում իրենց այգիների արեւաբոյր, աստղափայլ, արեւաբորբ մրգեր: Ցորեանի ծովերով անցնող Թագաւորի ու Ալանաց օրիորդի երթուղու առաջ են կանգնում շինականներ, պարանոցներից կախ ընկած տոպրակներից բուռերով ոսկեհատիկ ցորեան նետում յատկապէս Ալանաց գեղահրաշ օրիորդի վրայ, մաղթելով, որ նա բարեբախտութիւն բերէր հայոց աշխարհին, բազում որդիներ ու դուստրեր շնորհէր իրենց Արտաշէս Թագաւորի Երուանդեան գերդաստանին:*

*Ագնուազարմ, հայկազուն Արտաշէս Թագաւորի արարած մայր ոստանի դարպասներ տանող մայրուղիին էին խմբուել հազար-հազար Արտաշատ ոստանի մարդիկ: Եւ ահա, Ալանաց օրիորդին իր բազուկների մէջ առած Արտաշէս արքան արծուային թռիչքով դէպի Արտաշատ էր ճախրում: Որոտաձայն կանչերով ողջունում են նրան, պաղատում կանգնել ոստանի գլխաւոր դարպասի առաջ, Ալանաց օրիորդի գեղադէմ տեսքի հմայքով սքանչանալու: Ոստանի պահակազօրը, բազում մարտերում յաղթանակած դրօշները ծածանելով՝ պատուի կանգնում Արտաշէս Թագաւորին: Մեհեանի գլխաւոր քուրմը, արքունիքի, ոստանի աւագանիների հետ խոնարհւում նրան, առաջնորդում դէպի պալատ:*

*Ձիավար արքան, թամբին բազմած Ալանաց օրիորդ Սաթենիկի հետ կանգնում Պալատի հրապարակի բացատ: Այնտեղ խմբուած Արտաշատցիները բարձր կանչերով դիմաւորում նրանց, թմբկահարները բամբիռ են զարկում, երգիչները իրենց յօրինած անուշ տաղերն են հնչում: Արտաշատ մայր ոստանի խինդի որոտները դղրդում են Ալանաց Թագաւորի Կուր գետի այն կողմի բանակատեղին: Հարթակ ելած պարման-պարմանուհիներ, իրար իրանները գրկած, շուրջ պարեր բռնում, Ալանաց օրիորդը անձկանօք դիտում պարերը, դէմքին լոյսի ծիծաղ է իջնում, նայում չորս բոլորը, Արմէն-հայերի աշխարհը իրենց երկրի նման չէր, ակները յառում ոստանին հպած արեգաճեմ, ձիւնոտ երեսով լեռանը, աստուածների նման արարում չէր տեսել: Հեթանոս Արմէն-հայերի տաղեր, շուրջ պարեր էին: Արեւորդի Արմէն-Հայ, եթէ դու էլ ուզում ես զօրանալ նրանց արթնած կորովից, գնա'' քու երկրի միակ կանգուն մեհեան, լսի'ր նրա ատրուշանի կողքին կանգնած քրմուհիների հեթանոսական տաղերի երգերը, գնա' նախնիներիդ աստուածներ՝ Վահագնի, Միհրի, Մայր Անահիտի, Աստղիկի ծննդեան տօներին, ցեղիդ զարմից արեւորդիների տօնախմբութիւններին, ըմբոշխնի'ր նախնիներիդ աստուածների պատարագի շարականները, մտիր շուրջպարերի շարքեր: Իսկ եթէ այս Արմինի ու բազում արորդիների գիրը կարդաս, ինչքա˜ն պիտի իմաստնանաս նախնիներիդ քաջ արարումներով, նրանց ոգեղէն իմաստնութեամբ:*

*Արտաշատի մեհեանի քրմապետ՝ Հրաչեան, յայտարարել է, որ մեհենական արարողութիւնից յետոյ՝ Սահմի ամսի, Միհրի օրուայ ''ճառագայթեալ''-ին, Անահիտի մեհեանում կատարուելու է Արտաշէսի ու Սաթենիկի ամուսնութեան հանդէսի պատարագ, որից յետոյ մեհեանի կից բացատներում՝ երգիչների, նուագածուների մասնակցութեամբ կայանելու է Արտաշատ ոստանի մարդկանց համաժողովրդային տօնախմբութիւն:*

*Պալատի դարպասներն են բացւում, Արմինայի սպիտակաթոյր նժոյգներին բազմած, ծիրանի պարեգօտը իրանին, գօտկատեղից ոսկեհուր սուրը ընկած Արտաշէս Թագաւորը, նրան հետեւող լուսնի սպիտակ լոյսի հեղեղով պճնած Ալանաց օրիորդը կարմիր բաշերով ձին բազմած, արքունիքի աւագանիի ուղեկցութեամբ ձիաւարում են դէպի Անահիտի մեհեան: Քրմապետ Հրաչեան, մեհեանի նախամուտքին դիմաւորում նրանց: Քուրմերի ու քրմուհիների առանձին դասակներ Արտաշէսին ու Ալանաց օրիորդին թեւերի վրայ պահած տանում մեհեանի Անահիտի բագինի առաջ: Քուրմերը ու քրմուհիները շարքերով կանգնում նրանց կողքին: Արքունիքի աւագանիի անդամները, հանդիսաւոր երթով մտնում մեհեան, կանգնում քրմապետի ետին:*

*Այսպէս է խօսում Քրմապետը.*

*-Արմինա-Հայաստանի Արտաշէս Թագաւորի ամուսնութեան հանդէսի պատարագ է այսօր: Մայր Անահիտի բագինի առաջ Արտաշէսին ու Ալանաց օրիորդ Սաթենիկին օծելու եմ որպէս այր ու կին: ''ճառագայթեալ''-ի ժամին գնացել Սօսեաց անտառակ, հայոց աստուածների պատգամը լսելու: Արա ու Միհր աստուածների պատուիրեցին, որ երկրի Թագաւորը ամէն ''այգ''-ին աստուածներից հայցէր կրակի ու լոյսի յարատեւութիւնը: Քուրմ, կարմիր կրակով լիքը ատրուշանը բե'ր Անահիտի բագինի առաջ, բուռվառում կրակ լցրո'ւ, նրա լոյսը ցանի'ր Թագաւորի ու Ալանաց օրիորդի երեսներին, կարգն է այդպէս: Հայոց Հայքերի Արտաշէս Թագաւոր, երդուի'ր մայր Անահիտին, երդուի'ր Արմինա աշխարհին, որ անսասան կը պահես հայոց երկիրը: Քրմուհիներ, Արմինա-Հայաստանի աստուածներին սպասարկող քուրմերի յօրինած ամուսնութեան հանդէսների տաղեր հնչէ'ք: Արտաշէս Թագաւոր, հայոց Արա Գեղեցիկ Թագաւորի նման սիրիր Արմինա երկիր հարս բերած Ալանաց օրիորդ Սաթենիկին, կռուի ելի'ր նրա համար: Մտի'ր մեհեանները քու աստուածների, ծնրադրի'ր նրանց տիեզերական իմաստութեանը, պահապան լինեն Արմինա-Հայաստանին, Նար Ծովինար աստուածուհին անձրեւ տեղայ երկրի արտերին, այգիներին, բարգաւաճում ու առատութիւն լինի երկրում: Ալանաց օրիորդ Սաթենիկ, պաշտամունք նուիրի'ր Արմինների աստուածներին, երկրպագի'ր Մայր Անահիտի բագինին, երդուի'ր, որ կը հայանաս, բազում որդիներ ու դուստրեր նուիրես Արտաշէս Թագաւորին, յարատեւի զարմը Երուանդունի նախնիների տոհմի: Քուրմեր ու քրմուհիներ, հրալից ատրուշանի կարմիր լոյսով այր ու կին ամուսիններ եմ օծում Արտաշէսին ու Սաթենիկին, Ալանաց օրիորդին յայտարարում՝ Արմինա-Հայաստանի Սաթենիկ Թագուհի, այս ադամանդակուռ թագն եմ ամրացնում նրա ճակատին: Մեհեանի ու հրապարակի մարդիկ, միաբերան երգենք Վահագնի ծնունդի տաղը՝*

Երկնում էր երկինքը,
Երկնում էր երկիրը,
Երկնում էր ծովն ծիրանի

Տաղի երգի հնչիւններից *դողում էր Մեհեանը, հովերը նրա հնչիւնները տանում երկրի շէներ, արտերի հասկերին օրօր անում, հասնում Արարատի ճերմակ գագաթ,*

*Շար.ը էջ 19*

# «ԱՐԱՐԱՏ 73» 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1973 40 ՏԱՐԻ ԱՆՑ. ԱՅՍՕՐ «ԱՐԱՐԱՏ»-Ի ՓԱՌԱՀԵՂ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է:



*Ուղիղ 40 տարի առաջ Հոկտեմբերին հայ ժողովրդի պատմութեան մէջ գրուեց հերոսական եւս մի էջ, որի հեղինակները Երեւանի «Արարատի» ֆուտպոլիստներն էին: Այդ յաղթանակի ոգեւորութիւնն այսօր էլ չի մարել հայ ֆուտպոլասէրների յուշերում: Այդ օրուան ցնծութիւնը երէկ կատարուածի նման է պատմում իր «աշխարհը նուաճած» եւս մի հայորդի՝ սուգալողորդ Շաւարշ Կարապետեանը: «Արարատի» յաղթանակը հպարտութիւն էր հայ ազգի համար: Եւ, իհարկէ, այդ յաղթանակը պատմական եղաւ հայկական սպորտի համար: Մենք էլ հպարտանում էինք, որ նման թիմ ունենք, ունենք լաւ ֆուտպոլիստներ: Ես բոլորին մէկ առ մէկ ճանաչում էի եւ մինչ օրս էլ կապեր ունեմ նրանց հետ: Ուզում եմ հիմա շնորհաւորել եւ համբուրել բոլորին:*

*Նրանք բոլորը լուրջ տղաներ են, մեծ յաջողութիւնների հասած, որի համար ես անչափ ուրախ եմ: Ես ներկայ եմ եղել եզրափակիչ խաղին: Իշտոյեանի երկու գոլերից յետոյ մի արտայայտութիւն էր տարածուել. «Մարքս, Լենին, Իշտոյեան»: Դէ, պատկերացրէք, թէ այն ժամանակ ինչպիսի մարդկանց հետ էին համեմատում Իշտոյեանին», -պատմում է Շաւարշ Կարապետեանը:*

*40 տարի առաջ՝ 1973 թուականի Հոկտեմբերի 10-ին, Մոսկուայի «Վ. Ի. Լենինի անուան կենտրոնական մարզադաշտում» կայացաւ Երեւանի «Արարատ»-ի եւ Կիեւի «Դինամօ»-ի պատմական հանդիպումը, որտեղ Երեւանի «Արարատ»-ը, 2-1 հաշուով յաղթելով Կիեւի «Դինամօ»-ին, նուաճեց Խորհրդային Միութեան բիւրեղապակեայ գաւաթը: Այդ հանդիպումից օրեր անց, Երեւանի «Հրազդան» մարզադաշտում կայացաւ Երեւանի «Արարատ»-ի եւ Լենինգրադի «Զենիթ»-ի հանդիպումը, որտեղ «Արարատ»-ի անփոխարինելի աւագ Յովհաննէս Զանազանեանի եւ Էդուարդ Մարգարովի հրաշալի գոլերի արդիւնքում 3-2 հաշուով յաղթելով լենինգրադցիներին՝ «Արարատ»-ը նուաճեց նաեւ Խորհրդային Միութեան ախոյեանի տիտղոսը: Երեւանի «Արարատ»-ը դարձաւ 6-րդ թիմը, որը մէկ խաղաշրջանում նուաճեց ԽՍՀՄ ախոյեանի եւ ԽՍՀՄ գաւաթակրի տիտղոսները:*

*Տարբեր բառերով, տարբեր ոճերով ու ձեւով գրուեց եւ խօսուեց «Արարատ -73»-ի մասին. առաջինն անդրադարձաւ «Արմէնպրես» լրատուական գործակալութիւնը: Հաճելի եւ ուրախալի էր, որ մեզ հետեւեցին շատ այլ կայքեր ու լրագրողներ: Ինչ խօսք, ինչ ու ինչքան էլ ասուեց եւ գրուեց այդ տարիների մեր յաղթական թիմի մասին, դարձեալ քիչ է: «Արարատը» հայկական ֆուտպոլի դեռեւս միակ յաղթական էջն է, մենք իրաւունք չունենք այն մոռացութեան մատնելու... Իսկ ֆուտպոլային յաղթանակների ակնկալիքներ մենք դեռ շատ-շատ ունենք: «Արարատ 73»-ի 40-ամեայ յաղթանակի մասին «Արմէնպրես»-լրատուական գործակալութեան յատուկ նախագծում ներկայացուել են «Արարատ 73»-ի գրեթէ բոլոր ֆուտպոլիստների մասին պատմող հարցազրոյցներ, որտեղ «Արարատցիներն» անդրադարձել են 1973թ. առաջնութիւնում տարած յաղթանակներին: «Արարատ 73»-40 տարի անց» նախագծի շրջանակներում ֆուտպոլիստներից զատ մեզ յաջողուեց գրի առնել ինչպէս «Արարատ»-ի գլխաւոր մարզիչ Նիկիտա Սիմոնեանի, այնպէս էլ այդ օրերին «Արարատ»-ի մարզչական շտապում աշխատող այլ անձանց՝ մարզիչ Յարութիւն Քեհէյեանի եւ բժիշկ Վահագն Օրդեանի յուշերը: Ուրախացնող է այն, որ «Արարատ»ի մասին լսելի էր անգամ ԽՍՀՄ սահմաններից դուրս: «Արարատ»-ի երկգագաթ յաղթանակների մասին գրում էր անգամ գերմանական մամուլը, առանձնացնելով Արկադի Անդրիասեանի հրաշալի խաղը: Այս օրերին Երեւանում եւ Հայաստանի այլ մարզերում տօնւում է «Արարատ 73»ի 40-ամեակը: Արագածոտնի մարզի Ագարակ գիւղում, «Արարատցիների» ներկայութեամբ բացուեց ակումբի կրկնակի յաղթանակներին նուիրուած յուշարձան: Հոկտեմբերի 10 Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան պատրաստւում է մեծ շուքով մեծարել մեր լեգենդար ֆուտբոլիստներին: «Արարատ 73»ի յաղթական տարեդարձը, կը տօնուի նաեւ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում:*

**Պատրաստեց**
**Վարվառա Հայրապետեանը**

# Ի՞ՆՉ ՎՏԱՆԳՆԵՐՈՎ Է ՅՂԻ ՍԱԿԱՒԱՇԱՐԺՈՒԹԻՒՆԸ

*Հիպոդինամիա կամ սակաւաշարժութիւն. այս հասկացութիւնը թերեւս ծանօթ է մեզնից իւրաքանչիւրին: Դա զարմանալի չէ, քանի որ սակաւաշարժութիւնն իրաւամբ նուաճել է «դարի հիւանդութիւն» «պատուանունը»: Այն առաջընթացի հակառակ երեսն է: Ի՞նչ է իրենից ներկայացնում սակաւաշարժութեան համախտանիշը: Ի՞նչով է վտանգաւոր: Ի՞նչու է այն համարւում դարի հիւանդութիւն:*

*Ուրեմն սկսենք այն հարցից, թէ ինչ է սակաւաշարժութիւնը:*

*Բառը յունարէն «hypo» եւ «dynamis» բաղադրիչներից է կազմուած, որ թարգմանաբար նշանակում են «ներքեւում» եւ «ուժ»: Հիպոդինամիա ասելով՝ հասկանում ենք մկանային գործունէութեան թուլացում, որն առաջանում է նստակեաց կենսակերպի հետեւանքով ու շարժողական ակտիւ գործունէութեան սահմանափակմամբ:*

*Այսօր սակաւաշարժութեան խնդիրը յաճախ է քննարկւում ամէնուր, հիմնականում՝ քաղաքակիրթ երկրներում:*

*Դրա պատճառն այն է, որ հիւանդութիւնը երիտասարդանում է: Ժամանակակից բժշկութիւնն այսօր յաճախ է բախւում դեռահասութեան գիրութեան խնդրին: Ինչո՞ւ է այն դարի հիւանդութիւն կոչւում, որովհետեւ ժամանակակից մարդն ասես մոռացել է, թէ ինչ ասել է ֆիզիքական աշխատանք:*

*Տեխնիկան օրէցօր աւելի ու աւելի է զարգանում: Դրա արդիւնքում մարդն այլեւս ստիպուած չէ իր ձեռքով ինչ-որ բան անել: Բաւական է սեղմել այս կամ այն կոճակը, եւ անհրաժեշտ աշխատանքը մարդու փոխարէն լաւագոյն ձեւով կ՚անեն մեքենաները: Դա իսկապէս դարի ձեռքբերումն է, սակայն այդ ձեռքբերման հակառակ երեսն էլ այն է, որ հանգեցնում է առողջական լուրջ խնդիրների, որոնցից մէկն էլ հիպոդինամիան է: Ինչո՞վ է այն վտանգաւոր:*

*Մկանային գործունէութեան թուլացումն առաջին հերթին վտանգաւոր է նրանով, որ հանգեցնում է մի շարք հիւանդութիւնների առաջացման, որոնցից շատերը կարելի է հանգիստ լրջագոյն ախտերի դասը կարգել:*

*Սակաւաշարժութիւնը հանգեցնում է բոլոր օրգանների ու համակարգերի աշխատանքի խանգարման: Օրինակ՝ յաճախ հիպոդինամիայի հետեւանքով տուժում են սրտանօթային, նեարդային համակարգերը: Այն կարող է հանգեցնել նաեւ գիրացման:*

*Նիւթափոխանակութեան լուրջ խանգարումները հիմնականում առաջանում են հիպոդինամիայի հետեւանքով:*

*Կանխելու համար չպէտք է պարզապէս հանգիստը պառկած վիճակում անցկացնել: «Վերջ» ասեք նստակեաց կեանքին:*

*Մոռացէք անգործութեան բոլոր «հմայքների» մասին:*

*Վերջապէս, առողջ կենսակերպի անցէք, սնուէք ճիշտ ու ժամանակին, զբաղուէք որեւիցէ մարզաձեւով, հնարաւորինս շատ քայլէք, հրաժարուէք բոլոր վատ սովորութիւններից:*

*Մի խօսքով, զբաղուէք ոչ միայն հոգու խնդիրներով, այլեւ՝ մարմնի:*

*Ամէն տարի ողջ աշխարհում 5 մլն մարդ մահանում է միայն այն պատճառով, որ չափազանց պասիւ կենսակերպ է վարում: Այսօր ռիսկի խմբում մէկուկէս մլրդ մարդ կայ, որոնք ոչինչ չեն անում սակաւաշարժութիւնը յաղթահարելու համար:*

*« 15 եւ աւելի տարիքի մարդկանցից 10-ից 3-ը չափազանց պասիւ ու անառողջ կենսակերպ են վարում»,- յայտնում է հեղինակաւոր հրատարակութիւններից մէկը: Այդ խմբում շատ է կանանց թիւը, այն էլ՝ զարգացած ու ապահովուած երկրներից:*

*Մինչդեռ ակտիւ կենսակերպ վարել չի նշանակում պարտադիր սպորտով զբաղուել: Գիտնականները նշում են, որ այդ մէկուկէս միլիարդի մէջ չյայտնուելու համար բաւարար է շաբաթական 5 անգամ, 30- րոպէանոց ֆիզկուլտուրայի պարապմունքը:*

*Զմոռանանք նաեւ, որ անգործութիւնը ոչ միայն ֆիզիքականին է վնասում, այլեւ հոգեկանին:*

*Այսօր համեմատաբար քիչ են այն մասնագիտութիւնները, որոնք ֆիզիկական ակտիւութիւն են պահանջում: Եթէ դուք լրագրող էք, հաշուապահ, ծրագրաւորող, մի խօսքով՝ գրասենեակային աշխատող, այսինքն՝ ստիպուած ալիւրի պարկեր չէք տեղափոխում շալակած, դա լաւ է, սակայն, ինչպէս ժողովուրդն է ասում, պէտք է մետալի հակառակ երեսն էլ նայել: Հոգնածութիւն, տկարութիւն, թուլութիւն, անսովոր ծուլութիւն, երբ անգամ գիրք չես ուզում կարդալ եւ անընդհատ ցանկանում ես քնել ու քնել: Կար ժամանակ, երբ հանգիստ մի քանի կանգառ ոտքով կ՚անցնէիք, իսկ հիմա գերադասում էք տաքսի կանչել: Ծանօ՞թ է այդ վիճակը, ուրեմն արդէն պէտք է գգաստանանք, դա նշանակում է, որ սակաւաշարժութեան թիրախում էք:*

*Սակաւաշարժ կենսակերպին սովորելը շատ հեշտ է: Ու որքան քիչ ենք շարժւում, այնքան դայթակղիչ է դառնում ջանքեր գործադրելուց խուսափելը:*

*Զարմանալի փաստ է, որ շարժունակութեան նուազման հետ թուլանում են ոչ միայն մկանները, այլեւ մտաւոր ունակութիւնները: Մկանային ծանրաբեռնուածութեան թուլացումը հանգեցնում է հիւսուածքներին արեան մատակարարման նուազման, թթուածնի անբաւարար մատակարարման, եւ մարդը սկսում է տառապել թթուածնային քաղցից: Պարբերաբար շարժումների սահմանափակման հետեւանքով խախտւում է հորմոնալ եւ այլ համակարգերի վիճակը:*

*Մինչդեռ կարելի է պայքարել դրա դէմ, եթէ նոյնիսկ մի փոքր ցանկութիւն ունէք:*

*Բազմաթիւ ուսումնասիրութիւններով ապացուցուել է, որ կարեւոր է ոչ թէ մարզումների ծանրութիւնը, այլ դրանց կանոնաւորութիւնը: Բոլորովին պարտադիր չէ ուժային մարզումներ կատարել, ֆիթնես սրահ յաճախել կամ լողաւազան գնալ, որ բաւարարուած զգաք: Ամենապարզ միջոցը, որ կարելի է անել, օրական*

*Շար.ը էջ 19*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՕՍՔԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԵՐԸ

Շարունակուած էջ 2-էն

նագրի ստորագրման հետ, ես վստահ եմ, համաձայն է մեր հանրութեան մեծ մասը: Հիմա մենք ուսումնասիրութիւններ ենք անցկացնում, եւ չեմ կարծում, որ հանրաքուէի կարիք այսօր կայ: Բայց չեմ բացառում, որ վաղը նաեւ քաղաքական ուժերի պահանջով կարող է հանրաքուէ լինել: Սակայն վստահեցնում եմ Ձեզ, որ մեր ուսումնասիրութիւնները խօսում են այն մասին, որ մեր կայացրած որոշումը բխում է մեր ժողովրդի շահերից եւ նրա մեծ մասի ցանկութիւնն է:

Հայաստանի կողմից ԵՄ Ասոցացման Համաձայնագիրը Վիլնիւսում ստորագրելու մասին Սարգսեանի Ստրասբուրգում հնչեցրած հաւաստիացումներին ի պատասխան՝ Եւրայանձնաժողովի փոխնախագահ եւ արտաքին ու անվտանգութեան հարցերով Բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի կողմից յայտարարուեց, որ «Եւրոպական Միութիւնը մնում է հաւատարիմ Հայաստանի հետ յարաբերութիւնների խորացմանը բոլոր ոլորտներում, որոնք համատեղելի են Հայաստանի վերջերս յայտարարած նոր յանձնառութիւնների հետ Մաքսային միութեան հանդէպ, եւ գոհ են, որ Հայաստանը մնում է վճռական ԵՄ-ի հետ յարաբերութիւնները զարգացնելու հարցում»:

Դարձեալ Հոկտեմբերի 9-ին Եւրախորհրդարանը վաւերացրեց ԵՄ-Հայաստան վիզաների դիւրացման համաձայնագիրը: Այս փաստաթուղթը եւրաինտեգրման ամենաշօշափելի արդիւնքն է, որը շարքային հայաստանցին զգալու էր անմիջապէս: Անշուշտ, հեռահար հաշուարկ է, որ համաձայնագիրը վաւերացուեց եւ գործողութեան մէջ է դրուելու անկախ վիլնիւսեան գագաթնաժողովից: Վիլնիւսում ստորագրւող ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի փոփոխութիւնները քաղաքացին կը զգայ որ հասանելի է դառնում արդէն մէկ-երկու ամսից: Իսկ երբ Եւրոպան նոյնքան հասանելի է, որքան Ռուսաստանը, այլեւս ո՞վ կամ ի՞նչը կարող է հայաստանցիներին ետ պահել Եւրոպայից:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

## ՍԻՐՈՅ ԲԱԺԱԿԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՏՐԱԿԸ

Շարունակուած էջ 7-էն

գող հոսք մը կայ:

գ. Ժողովուրդը աղքատութեան մէջ կը հիւծի:

դ. Ընկերային կեանքը ահաւոր անկումի մէջ է: Օրական անձնասպանական պարագաներ կ՚ արձանագրուին:

ե. Ընտանիքի պատկերը աղաւաղուած է, անբարոյութիւն, ամուսնալուծում եւ այլ մթասուեր երեւոյթներ կը բազմանան: Եկեղեցին ի՞նչ կ՚ընէ:

Եկեղեցին ի՞նչ կ՚ընէ,
ԱՐՄԱՏԱՊԷՍ ի՞նչ կ՚ընէ:

Արդե՞օք եկեղեցին մոռցած է իր բուն պատասխանատուութիւնը, քրիստոնէական եւ հայկական աւանդներէն բխող պարտականութիւնը: Ժողովուրդին հետ ըլլալու, ժողովուրդին ծառայելու պարտականութիւնը:

Ասոնք հարցեր են, որ առողջ ժողովականութեամբ, առողջ եւ անմիջական լուծումի կը կարօտին:

Վստահաբար Նուիրապետական չորս Ս. Աթոռներու անկեղծ ու սերտ գործակցութեամբ եւ լծակցութեամբ՝ բոլոր միաբաններուն ու հոգեւոր դասուն, կարելի է բարենպաստ ու յուսալից պայմաններ ստեղծել ամէն տեղ, ուր հայ եկեղեցւոյ անդամ մը կ՚ապրի...

Աստուծոյ սիրոյն եւ մեր տառապած ու տառապող ժողովուրդին պտղունց մը բարիքին ի խնդիր՝ ստեղծենք եղբայրական ու համերաշխ մէկ երդիք՝ աստուածահաճոյ եւ ազգաշէն: Աշխատինք ամբողջ հոգեւորականութեամբ ո՛չ անձնական՝ անանձնական ուրախութիւնը մեր ժողովուրդին մէջ վերահաստատել այդ երդիքին տակ: Ու այդ երդիքին տակ անկարգութիւն յառաջացնողներուն դէմ միա՛յն գործածենք Քրիստոսի ՄՏՐԱԿԸ, անշուշտ երբ ՍԻՐՈՅ ԲԱԺԱԿԸ յորդի...

Զմոռնալ, որ իրաւ ու պարզ հոգեւորականը՝ իրա՛ւ հովիւն է, կամ՝ իրաւ հովիւը՝ իրաւ ու պարզ հոգեւորակա՛նն է (Հմ Յհ 10.11):

## ԹԱԳՈՒՀԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Շարունակուած էջ 8-էն

վեր է խոյացել Երուանդ Պապայեան հիմնարկը որպէս կոթող՝ ի նպաստ ազգակերտումի եւ հայակերտումի:

Իմ շատ սիրելի Երուանդ Պապայեան,
Փառք ու պատիւ Ձեզ:
Կեանքում մի մազդ էլ սպիտակելի,
Մեր սրտի բոլոր լարերն են լալիս,
Աշխարհից ուրիշ ոչինչ չենք ուզում,
Նոր ձիւն չդնի մազերին ձեր ձիւն:

Դարերից եկած ու դարեր գնացող մեր ժողովրդի համար դուք մնալու էք արժանի երախտագիտութեան եւ որպէս համայնքի նահապետ այս պահին թագադիր լերան տիրոջ իրաւունքով վայելենք հպարտութիւնը հայ ծնուած լինելու եւ հայ ժողովրդի արժանի զաւակը լինելու համար:

Ձեզ ոչ թէ յոյսի ընդունայն խօսքեր,
Դաշտի ծաղիկներ կ՚ուզէինք Ձեզ տալ:
Ձեզ ոչ թէ դաշտի թօշնող ծաղիկներ,
Երկնքի աստղերը կ՚ուզէինք Ձեզ տալ:
Ձեզ ոչ թէ մութից դողացող աստղեր,
Կեանքի արեւներ կ՚ուզէինք Ձեզ տալ,
Յաւերժութիւնը ողջ տիեզերքի:

www.massispost.com
Updated Every Friday

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԻ ՄԸ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Շարունակուած էջ 6-էն

պահանջեց Հայաստանի Ազգային ժողովէն յետս կոչել այդ արձանագրութիւնները: Այս, կուսակցութեան անշեղ ու հաստատակամ ուղեգիծն է, որ օրին եթէ ոմանց կողմէ խէթ հայեացքներով դիմաւորուեցաւ, շատերու հաճելի չթուեցաւ, ուրիշներու համար կարծր եւ ոչ ժամանակակից նկատուեցաւ, սակայն պահանջատէր եւ իրաւատէր կուսակցութեան մը համար այս քաղաքական յստակ վարքագիծ է, անսակարկելի դիրքորոշում մը:

Չորս տարիներ առաջ Ցիւրիխի մէջ սկսած հաշտութեան գործընթացին յանձնառութենէն խուսափողներ եւ թերացողներ, իրենց իսկ ստորագրութիւնը դրժողներ եւ ուրացողներ ինչո՞ւ չեն հրաւիրուիր պատասխանատուութեան այդ հաշտութեան կազմակերպիչներուն եւ ոստիկաններուն կողմէ (ԱՄՆ,

Ռուսիա, Ֆրանսա, Եւրոպական Միութիւն, Զուիցերիա): Ինչո՞ւ անոնք հոգեհանգիստ չեն նախաձեռներ «Հայ-Թրքական Արձանագրութիւններ»ուն չծնած մեռած հոգիին համար:

## ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՈՎ ՈԳԵԿՈՉԵՑ

Շարունակուած էջ 14-էն

յուզախառն կատարողութեամբ երգեց «Անմեղ զոհեր»ը, նուիրուած հալէպահայ նահատակներու յիշատակին: Այս երգին խօսքի հեղինակն է Պրն. Ռաֆֆի Սիւլահեան, երաժշտութիւնը՝ Մհեր Մինասեան: Մեներգի ընթացքին սահիկներու վրայ ցուցադրուեցան հալէպահայ նահատակներուն նկարները եւ Հալէպի շտապ օգնութեան տարած քաջարի եւ անձնազոհ աշխատանքները:

Բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօսը, Հ.Բ.Ը.Մ.-ի Հալէպի Տեղական Վարչութեան ատենապետ, մտաւորական եւ կրթական մշակ Պրն. Յակոբ Միքայէլեանը ներկայացնելու օրուան պատգամը:

Փունջ մը ազգային, հայրենասիրական երգեր ներկայացուց Համազգայինի «Զուարթնոց» երգչախումբը, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց:

Ապա Սրբազան հայրը տուաւ իր պատգամն ու սրտի խօսքը: Ան վեր առաւ քսաններու առաքինութիւնը, անոնց նուիրումը հայ ժողովուրդի ազատութեան: Նաեւ շեշտեց եւ վերծանեց գաղափարի համար նահատակութեան իմաստը: Սրբազանը կարեւորեց դիմակալել ներկայի մարտահրաւէրները միասնականութեան ջանքերով, իրապաշտ մօտեցումով մը, ինչ որ կը թելադրէ քսաններու նահատակութեան յետնորդ սերունդներուն 98 տարիներ ետք անգամ:

Տեղի ունեցաւ շնորհակալագրերու բաշխում Ս.Դ.Հ.Կ. Տիրոնի Ուսանողական Երիտասարդական Միութեան վարչութեան ատենապետ ընկ. Յակոբ Գլընճեանի ձեռամբ «Ռատիօ Երազ»ի անձնակազմին, «Գէորգ Եսայեան», սրահի խնամակալութեան, օրուան բանախօս Պրն. Յակոբ Միքայէլեանին, Համազգայինի «Զուարթնոց» երգչախումբին, հալէպահայ շտապ օգնութեան եւ վերականգնումի գործադիր մարմնին, նաեւ արծաթէ ափսէ մը նուիրուեցաւ Թեմիս Բարեջան Առաջնորդին բարձր գնահատելով իր հայրական զոհողութիւնները:

Յուշատօնը փակուեցաւ սրբազան հօր պահպանիչով եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քայլերգով:

Քսան Հնչակեան Հերոսներուն յիշատակի ոգեկոչումը առիթ մը եղաւ հալէպահայութեան վերահաստատելու քսաններու անշեղ ուղին, որ ցոյց տրուեցաւ Փարամազին եւ իր ընկերներուն կողմէ հայութեան եւ Հայաստանի ծառայութեան:

Այս հանդիսութիւնը, որ նուիրուած էր քսան կախաղաններուն կրկին անգամ ցոյց տուաւ թէ հայը, հալէպահայութիւնը միահամուռ ուժերով կրնայ հրաշքներ գործել, վկայ հանդիսութեան մասնակիցները եւ ժողովուրդի հոծ բազմութիւնը:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

## Ի՞ՆՉ ՎՏԱՆԳՆԵՐՈՎ Է ՅՂԻ ՍԱԿԱՒԱՇԱՐԺՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 17-էն

գոնէ կէս ժամ քայլելն է: Տուն գնալիս կարելի է մէկ կամ երկու կանգառ ոտքով գնալ: Աստիճանաբար այդ զբաղմունքը ձեզ դուր կը գայ:

Եթէ վերելակն ուշանում է՝ մի սպասէք, փորձէք ոտքով հանգիստ բարձրանալ: Հրաշալի միջոց են շարժուն խաղերը, ֆուտպոլը, վոլէյբոլը կամ, ձեր նախընտրութեամբ, մէկ այլ խաղ:

Խորհրդակցութեան ժամանակ կանգնէք. ի դէպ, կանգնած դիրքն օգնում է նաեւ կենտրոնանալուն:

Յիշէք այն ժամանակները, երբ էլեկտրոնային նամակների փոխարէն հաղորդելիքը բերանացի էինք փոխանցում կամ այցելութիւններ կատարում: Դա մարզուելու տարբերակ է ու մտերիմներին եւ ծանօթներին հանդիպելու մի նոր առիթ:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՀԱՅԵՐԻՆ ՄԻԱՒՈՐՈՒՄ Է ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*յետոյ նոյնպէս եկել եմ եւ ամուսնացել Գեղարդում: Բացի այդ, մասնակցել եմ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նուագախմբի շատ համերգների: Աւելի ուշ նուագախմբի իմ լաւ ընկերների հետ ձայնագրեցի «Կոմիտասի երգեր» ձայնասկաւառակը, որը 2008-ին առաջադրուեց Գրեմմի մրցանակի:*

-Սեպտեմբերի 17-ին Դուք մասնակցեցիք Հայկական եկեղեցու օծման արարողութեանը: Ի՞նչ զգացողութիւններ ունէք այդ միջոցառումից յետոյ:

*-Շատ հպարտ եմ: Հաւատում եմ, որ մեր կեանքում ամենակարեւորը ճակատագիրն ու եկեղեցին են: Եկեղեցին մշտապէս մեր գոյութեան անբաժանելի մասն է եղել: Իսկ եթէ դու ճակատագիր չունես, դու կորցնում ես հաւատդ կեանքի լաւ երեւոյթների նկատմամբ: Դու նոյնիսկ ապրելու պատճառ չունես: Եկեղեցու ստեղծումը նշանակեց, որ աւելի շատ հայեր կը հաւաքուեն մի վայրում եւ իրենց հարազատ լեզուով կը խօսեն օտար հողում: Համերգը շատ իւրայատուկ էր: Ինձ համար մեծ պատիւ էր մասնակցել նման միջոցառմանը, շատ շնորհակալ եմ եւ երջանիկ, որ կարողացայ մասնակցել համերգին: Յատկապէս ուրախ էի, որ նուագախումբը ղեկավարում էր Էդուարդ Թոփչեանը, որովհետեւ նա հրաշալի դիրիժոր է:*

-Գիտեմ, որ երիտասարդ տարիքում Դուք երգել էք Հայկական եկեղեցում: Այդ օրերի հետ կապուած ի՞նչ յիշողութիւններ ունէք:

*-Երբ մտածում եմ Լիբանանի Զահլէ քաղաքում գտնուող իմ մանկութեան եկեղեցու մասին, միանգամից պատկերացնում եմ կիսախաւար եկեղեցի փոքրիկ մոմերի առկայծումով, զգում եմ խնկի եւ մոմակալների բոյրը եւ վերյիշում ինձ 6-7 տարեկան հասակում, կանգնած երգչախմբում՝ մայրիկիս դիմաց: Զգում եմ, որ պաշտպանուած եմ նրա կողմից եւ շրջապատուած Աստծոյ սիրով մեր եկեղեցու անհամեմատ գեղեցիկ օրհներգերն ու միջնադարեան շարականները երգելու ընթացքում, որոնք դէպի Աստուած տանող ամենաուղիղ ճանապարհն են:*

-Հայ արուեստագէտներից ո՞վ է Ձեզ յատկապէս ոգեշնչում:

*-Եթէ ստիպուած եմ ընտրել (որովհետեւ նման մարդիկ շատ են), ապա կ'ընտրեմ Քեթի Բերբերեանին: Առաջինը եւ ամենագլխաւորը՝ ես զմայլւում եմ նրա բազմունակութեամբ եւ արտիստիզմով, որոնք բացարձակապէս անկրկնելի են: Նա ռիսկի էր դիմում, բացայայտում էր նոր ծրագիր, երգում էր բոլոր կանանց ձայներով. 20-րդ դարի շատ հանճարեղ կոմպոզիտորներ նրա համար ստեղծագործութիւններ են գրել: Եւ ամենակարեւորը. որպէս անձնաւորութիւն նա խիստ սրամիտ էր եւ զուարճասէր: Ես սիրում եմ նրա հետաքրքրասէր ոգեղը եւ անչափ յարգում եմ կեանքի նկատմամբ նրա սէրը:*

-Ձեր երեխաների մասին կը պատմէ՞ք: Երաժշտութիւն սիրո՞ւմ են լսել:

*-Իմ որդին հանգստանում է երգերիս ներքոյ: Նա ինձ հետ մշտապէս ճամբորդել է աւելի փոքր տարիքում, մասնակցել իմ համերգներին:*

*Միշտ լսում է, թէ ինչպէս է իր մայրիկը երգում, իսկ հայրիկը նուագում: Շատ երաժշտական երեխայ է, նոյնիսկ երգել աւելի վաղ սկսեց, քան խօսել: Ես նրա համար Կոմիտասի եւ Կանաչեանի օրօրոցայիններն եմ երգում, հայկական երգեր եմ կատարում, տանում եմ եկեղեցի:*

*Միւս փոքրիկս 9 ամսական է: Երբ բարձրաձայն եմ երգում, վախենում է: Նա նոյնպէս սիրում է լսել իմ ձայնը:*

-Իզաբէլ, ինչ էք այժմ պատրաստում: Նոր սաւնդթրէք ձայնագրելու էք:

*-Իմ նոր ձայնասկաւառակը, որը կոչւում է* "Troubadour and the Nightingale", *մէկ ամսից կը թողարկուի: Ուրախութեամբ փաստեմ, որ Ռաւելի եւ իմ ամուսնու՝ Սերուժ Քրաջեանի ստեղծագործութիւններից բացի, այն կ'ընդգրկի նաեւ Սայաթ-Նովայի աշուղական երգերը, որոնք մշակել է Սերուժը կամերային նուագախմբի համար:*

-Երազանքներ ունէ՞ք:

*-Ես այնքան բախտաւոր եմ եւ այնքան շնորհակալ այն ամէնի համար, ինչ ունեմ իմ կեանքում: Ես անում եմ այն, ինչ սիրում եմ:*

*Շնորհակալ եմ ամէն ինչի համար, եւ յատկապէս երեխաներ ունենալուս համար. նրանք իմ կեանքի իմաստն են: Իհարկէ, երազել պէտք է, որովհետեւ առանց դրա ապրելն իմաստ չի ունենայ: Այն ամէնն, ինչ ձեռք եմ բերում, ինձ համար լրացուցիչ օրհնութիւն է: Ես մի հասարակ երազանք ունեմ՝ առողջ լինել, որպէսզի վայելեմ բոլոր օրհնութիւնները եւ կեանքի բոլոր հնարաւորութիւնները՝ իմ երեխաների հետ: Երեխաները, կարծես, ցանկացած մօր աքիլլեսեան գարշապարը լինեն: Կարծում եմ, որ եթէ առողջութիւն չունես՝ ոչինչ չունես: Երազանքներս, ինչպէս տեսնում էք, շատ հասարակ են:*

*Իզաբէլ Պայրաքտարեանը ծնուել է Լիբանանում, երգել է հայկական եկեղեցու երգչախմբում: Այնուհետեւ տեղափոխուել է Գանատա եւ զբաղուել երգով՝ արդէն որպէս պրոֆեսիոնալ: 2000 թուականին յաղթել է Պլասիդօ Դոմինկոյի կազմակերպած «Օպերալիա» մրցոյթում, որը նրա առջեւ շատ դռներ է բացել: 2004 թուականին Պայրաքտարեանի երկրորդ՝ «Azulço» ձայնասկաւառակը նրան բերեց «Ջունօ» մրցանակ: Բացի այդ, երգչուհին առաջադրուել է նաեւ «Գրեմմի» մրցանակի՝ «Մատանիների տիրակալը» ֆիլմի երգի հիասքանչ կատարման համար: Հայ ռեժիսոր Ատոմ Էգոյեանի «Արարատ» ֆիլմի սաունդթրեքում եւս հնչում է Պայրաքտարեանի ձայնը:*

***Բացառիկ հարցազրոյցը՝ Ռոզա Գրիգորեանի***

## ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐԻ

*Շարունակուած էջ 16-էն*

*որտեղ հայոց աստուածները նաեւ բարձրաձայնում Վահագնի ծննդի տաղը: Փառաւորեմ քեզ Արմինա-Հայաստան արարչական երկիր:*

*Քրմուհիները, Սաթենիկ Թագուհուն իրենց թեւերի վրայ պահած գալիս մեհեանի հրապարակ: Արտաշատ ոստանի մարդիկ բարձր կանչերով ողջունում Թագուհուն, Արմինայի լեռների լանջերի հազար գոյնի փրափիոն ծաղիկներ նետում Սաթենիկ Թագուհու գլխավերեւ, ապշահար նայում է ինչպէ՞ս էր ծիածանի անձրեւ մաղում Թագին: Հարսանեաց հանդէսի խրախճանք էր, փամփիռների դողացող լարերի, թմբուկների զարկերի անուշ մեղեդիներ հնչում, քրմուհիները Սաթենիկ Թագուհին թեւանցուկ արած շուրջ պարի բերում: Յորեանի արտերում հովիկների յառնած հասկերի դողի նման քրմուհիներն էին հազար նազանքով պար բռնել, Սաթենիկ Թագուհին հոլանի թեւերն էր երկինք յառել, արեւից ճառագայթներ փրցնում՝ նետում չորս բոլորը: Արտաշատի մի կտրիճ պարման, պարի հարթակ դուրս գալիս՝ սկուտեղին լիքը մարգարիտ, այն բուռբուռ՝*

Տեղում էր մարգարիտ
Սաթենիկի հարսնութեան հանդէսին:

*Թմկահարները պինդ զարկում են թմբուկները, փողերն են յաղթական պարեր հնչում, քուրմերը Արտաշէս Թագաւորին թեւանցուկ արած գալիս հրապարակ: Արտաշէսը գնում պինդ գրկում Սաթենիկին հազար համբոյր շաղում լուսնեակ դէմքին: Թուրն է պարզում արեւին, նրանից ելած շողերը ցանում Սաթենիկի դէմքին: Շարք բռնած քրմական դասի շուրջ պարն է, տոփում են գետինը, նրանց զարկից Ալանաց երկիրն է դողում: Թագաւորը, հատու շարժումներով թուրն է ճօճում դէպի արեւ, նրա կրակից մի պատառ քաղում, Սաթենիկ Թագուհուն նուիրում: Նորէն Արտաշատի մի քաջ տղայ, ծանր սկուտեղը վեր պահած, մտնում պարի բացատ եւ՝*

Առատ անձրեւի պէս ոսկի էր տեղում
Արտաշէսի փեսայութեան հանդէսին":

*Մինչեւ իրիկուն, մեհեանի հրապարակում ժողովրդային խրախճանքն էր ամպրոպի պէս փոթորկում, անկախացած հայքերի երկրի Թագաւորի հարսանիք էր, երգում էին, մենապարեր ու իրենց նախնիների շուրջ պարեր էին, գինի էր հոսում հրապարակում, սրտի յոյզի, գինու արբեցում էր: Երկար տարիներ հզօրների ենթակայութեան էին, իրենց Թագաւորը հայքերի հողն էր սահմանազատել, որտեղ որ հայերէն բարբառող արեւորդիների զարմից մարդիկ էին: Ամբողջ Արտաշատն էր Թագաւորին ու Թագուհուն տանում պալատ, Եօթ օր, եօթը գիշեր Արտաշատում, Արմինա-Հայաստանում Արտաշէս անուշ, բարի Թագաւորի ու Սաթենիկ Թագուհու հարսանեաց հանդէսի տօնախմբութիւն էր:*

*Ալանաց օրիորդ՝ Սաթենիկ Թագուհի, Արմինա-Հայաստանին ընծայել վեց տղաներ՝ Արտաւազդ, Վրոյր, Մաժան, Զարեհ, Տիրան, Տիգրան, որոնց արեւորդի նախնիների ծիների հետ խաչաձեւել են նաեւ Ալաններ քաջ ազգի ծիները: Ինչո՞ւ Ալանների յետնորդներին չեն յիշեցնում, նրանց նախնիների հետ Արմինա-Հայաստան երկրի խնամիական բարեկամական կապերը: Հայոց որդիներին, դուստրերին տալիս են հազար օտար անուններ, Արմին-հայերի ինչքա՜ն սիրուն պատմական անուններ կան, որոնք հպարտութեամբ նրանք կը կրէին:*

*Ես էլ էի այնտեղ, երեւակայութեան ճախրանքով գնացել Արտաշատի մեհեան, մասնակցել Արտաշէսի արքայի ամուսնութեան հանդէսի պատարագին: Մեհեանի հրապարակում Մուսաների լեռան լանջի շէնի քաջի մենապար բռնել, պիտի տեսնէի՜ք արեւորդիները ինչպիսի՜ խանդաղատանքով ծափ տալիս, իրենք էլ մտել հարթակ ինձ հետ իմ լեռնական մարդկանց պարը նմանակել: Արորդի Արմէն-Հայ, երբ ընթերցես իմ այս գիրը, անէացի՛ր մի պահ, արեւի ճառագայթներին բազմած հասի՛ր Արտաշատի մեհեան, գրկի՛ր անուշ Արտաշէս Թագաւորին, խոնարհի՛ր Մայր Անահիտի բագինին, ցօղի՛ր դէմքդ ատրուշանի կրակի լոյսով, արբեցի՛ր քու զարմից արեւորդիների Արմինա-Հայաստանով, մտի՛ր շուրջ պարի շարքեր, արբեցի՛ր սիրով, գինիով, հոգիդ լեցո՛ւր Արմինա-Հայաստանի խինդով, սիրի՜ր արարչական երկիրդ, սիրի՛ր քու զարմից արեւորդի ազգակիցներիդ, մի փախնիր նրանից, նրա տէրն ես դու, գնա'' տիրիր նրան:*

«ՔԱՂ ՆԱԶԱՐ»
ՌԱԴԻՈ ԺԱՄ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------
**Address:** ---------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Fax :** -------------------------

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Massis
Weekly

You are cordially invited to celebrate

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ-ի 33-րդ Տարեդարձի
Ճաշկերոյթ Պարահանդէս

Massis Weekly 33rd Anniversary
Dinner Dance

Երեկոն պիտի խանդավառէ
սիրուած Երգիչ՝

Յարութ Յակոբեան

Performance by:
HAROUT HAGOPIAN



Տեղի կ՛ունենայ
Շաբաթ
9 Նոյեմբեր, 2013
Ժամը 8-էն սկսեալ՝

Saturday November
9, 2013
Starting at 8:00 p.m.

At the Arbat Banquet Hall
711 S. San Fernando Rd. Burbank, CA 91502

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել
For more info. call: (626)7 97-7680
Donation $75.00